

ՀԱՅ ՀԻՆ ԻՐԱԻՈՒՆՔԸ

Ա. Պ. Տ. Տ. Ե. Ս. Ն. Ի.
ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԻՐԱԻՈՒՆՔ

ԶՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

§ 11.

ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Արիական ազգերի իրաւաըմբռնողութեամբ ամուսնութիւնը մարդու և կնոջ մէջ ցկեանս կազմած մի դաշնադրութիւն է: Թէ հայկական ընտանեկան կազմակերպութեան նախընթաց շարայարութիւնը և թէ հայ ժողովրդական հետեւել առացւածը թէ ևմի բարձի ծերանաքը գալիս են ապացուցելու, որ հայերի իրաւաըմբռնողութեամբ էլ ամուսնութիւնը մարդու և կնոջ ցկեանս դաշնադրութիւն է: Ամեն դաշն պիտի կայանայ որոց ձեսկանութիւնների կերառմամբ, որոնք այդ իրաւական ինստիտուտին տալիս են ոչ միայն կայունութիւն և հաստատութիւն, այլ նաև ծառայուն են իրը միջոց նրան-կապած դաշնին-հրապարակելու, ամենքին յայտնի կացնելու: Ամուսնութեան դաշնը կապելու համար անյայտ զարերից սկսած ի կեանս են հրաւիրել արիական ազգերը բազմաթիւ իրաւական նորմեր, ծէսեր և սովորոյթներ, առանց որի մի ամուսնութիւն իրը այդպիսին չի կարող ճանաչել չնդկական հին ազգիւրները լիքն են այդպիսի ցուցումներով: Շատ բնական է, որ հայերի մօտ էլ նոյնը լինէր, որ հայերն էլ ամուսնութեան դաշնը ոչ այլ կերպ կապւած համարէին, քան այն պարտադիր կանոնների և սովորոյթների համաձայն, որ ժամանակի ընթացքում ազգը սահմանել է յատկապէս զրահամար, Ասել է, հայերի մօտն էլ ամուսնութիւնը օրինական է, իրը նա հայրենի իրաւանորմերի ճիշտ կերառմամբ է տեղի ունեցել:

Հստ երևոյթին մի հակասութիւն է, որ միւս բոլոր արիական ազգերի հետ հայ ազգն էլ այդ խիստ շեշտած իրաւացմբոնողութեան կողքին համբերում է մի այլ նորից զօրեղ կերպով շեշտած իրաւացմբոնողութիւն։ Խոսք ցկեանս կազմւած այդ դաշնի լուծիլի լինելուն է վերաբերում։ Բայց դա պարզ հետեւանք է ամուսնութեան գլխաւոր նպատակներից մէկի՝ ժառանգ յարուցանելու և դրա միջոցով ցեղը շարունակելու ըմբռնողութեան։ Այսպէս էր մտածում հին մարդը, եթէ ամուսնութիւնը ամուսնապտուղ է, դա խանգարում է այդ հիմնական նպատակի իրագործելը, ուստի և այդպիսի ամուսնութիւնը լուծիլի է։

Բոլոր արիական ազգերի մէջ ինչպէս և նոցա թւում հայերի մօտ ինչքան էլ որ ամուսնութիւնը մի քաղաքացիական ակտ է եղել ու նրա կապելն ու քանդելը զուտ աշխարհիկ բնոյթ ու նեցել ըստ էութեան, այսուամենայնիւ ըստ ձեմի, ըստ արտաքին ծիսակատարութիւնների, նա կապւած է եղել հոգեսոր-կրօնական սովորութիւնների և հիմնարկութեանց հետո կրօնական-սրբազն արարողութիւններ պակասել չեն հեթանոսական ժամանակներում իսկ ամուսնական դաշնը կռելիս։

Քրիստոնէութեան առաջին դարերին իսկ եկեղեցին ձգտել է ամուսնութեան ինստիտուտն իր իրաւասութեան ենթարկել, աշխատելով այն դարձնել զուտ կրօնա-զաւանական մի ակտ։ Նամանաւանդ կաթոլիկ եկեղեցին այդ խնդրում գնաց խիստ առաջնա ամուսնութիւնն իր յարակից խնդիրներով ոչ միայն իր իրաւասութեան ենթարկեց, այլ նաև ամուսնութեան անլուծելիութեան սկզբունքը ընդունեց և դարերից ի վեր, իբր մի քարացած դոգմա պարտաւորիչ դարձրեց կաթոլիկ աշխարհին։ Դա պարզ հետեւանքն էր ամուսնութեան իրեր եկեղեցու խորհուրդ (Sacrament) ճանաչելու փաստի։ Դա մի ամբողջ վարդապետութիւն է, զաւանարանական քարացած մի սկզբունք, որին, բարեբախտաբար չէ հետեւել հայ եկեղեցին։ Բայց հայ եկեղեցին մի բան արել է։ Նա էլ միւս եկեղեցիների նման ամուսնութիւնը ճանաչել է կրօնա-եկեղեցական մի ակա ու ձգտել լիովին իր իրաւասութեան ենթարկել, հակառակ ոչ միայն այդ ձգտման, այլ նաև այն հանգամանքի, որ մեր մէջ ամուսնութիւնն իրօք որ եկեղեցու իրաւասութեանն է յանձնած, հայ ամուսնութիւնը պահել է աշխարհիկ կամ քաղաքացիական ամուսնութեան շատ զօրեղ գծեր։ օրինակ, ամուսնութեան լուծելիութիւնը։

Անշան չէ սրան մի քանի խորհրդածութիւններ էլ կցել, ուրոնք իրեր նորութիւն, կարող են մասնագէտների եթէ այդպի-

միք կան —ոչ միայն հետաքրքրութիւնը շարժել, այլ նաև նոցա հարցասիրութեան առարկայ լինել:

Հայոց եկեղեցական իրաւունքի իմ ուսումնասիրութիւններս, որ յենւած են այդ իրաւունքի բոլոր հնարաւոր աղքաղիւդների հետազօտութեան վրայ, բերին ինձ այն համոզման, որ ըստ հայ եկեղեցու գաւանութեան, ամուսնութիւնը խորհուզող չէ: Հայ եկեղեցու իրաւացմբանողութեամբ և գաւանութեամբ, որ այնքան պարզ կերպով արտայայտել է Շահապիվանի ժողովի (447թ.) կանոնների (3, 4, 5) մէջ, ամուսնութիւնը՝ եկեղեցու պսակի միջոցով սրբագործւած՝ մարդու և կնոջ ցկեանն մի միութիւն է, նոյն կանոնները ցոյց են տալիս, որ եկեղեցական պսակը հինգերորդ գարում արդէն պարտաւորականի բնոյթ է ունեցել: Ըստ այդմ, եկեղեցու պսակը ոչ միայն սրբագործում էր մարդու և կնոջ այդ միութիւնը, այլ նաև Աստուածային օրնութիւնն էր բերում այդ նոր զոյզգի վրայ: Իսկ մենք զիտենք, որ պսակի ժամանակ կատարւած զոհերն ու երբեմն խիստ խորհրդաւոր ծէսերը հայերի, ինչպէս և միւս արիների, մօտ ունէին հեթանոսութեան ժամանակ նոյն միաքն ու նշանակութիւնը: Թրիստոնէութեան ժամանակի ընթացքում եկեղեցական ծէսերով և պսակով: հին ծէսը տեղի տեսց նորին, հին կրօնը փոխարինւեց նորով, իսկ այդ նորի ըմբռնողութեամբ ամուսնութիւնը վերուստ-Աստուածանից սահմանած մի միութիւն էր:

Ամուսնութեան, աւելի շուտ պսակի մասին մեր եկեղեցու յիշածն դաւանաբրնողութեամբ եկեղեցու ձեռքով կատարւած պսակն իսկապէս չպէտք է լուծելի լինէր: Հին իրաւացմբանողութեամբ էլ ամուսնութիւնը ցկեանն էր կապւում: Սակայն հին այդ գողման մի քարացած ըմբռնողութիւն չէր, նա ի հարկին տեղի էր տալիս մի այլ փրաւարմբանողութեան: «Ձոր Աստուած զուգեաց մարգ մի մեկնեսցէ» ի վրայ յենող՝ ամուսնութեան անլուծելիութեան դոզման, որ կրօնա-եկեղեցական մի ըմբռնողութիւն էր (և է), չէր համապատասխանում հայ ժողովրդի ազատուն, հայ-ժողովրդի աշխարհիկ-ազգային իրաւունքի նորմերին: Ամուսնութեան մասին հոգեոր-կրօնական ըմբռնողութիւնը որքան և զօրեղ կերպով շեշտել է առաջ բերած կանոնների մէջ, այնուամենայնիւ Շահապիվանի օրէնսդիրը, զեկավարւելով ազգային-աշխարհիկ ողու տրամադրութեամբ, սահմանել է ամուսնութեան կապի լուծելիութիւնը: Հոգեոր-կեկեղեցական ըմբռնողութիւնը նահանջել է աշխարհիկ-ազդային իրաւացմբանողութեան առաջ: Շահապիվանի օրէնսդրի կամքը ձևաւորւած մի իրաւա-

Նորմով դառնում է այդպիսով պարտաւորական նաև ազգային եկեղեցու և նրա վարչութեան համար։

Հայաստանի նւանողները, ինչպէս այդ տեսանք, նամանաւանդ ամուսնական խնդիրների ամբողջ կարգաւորումը թողել էին Հայոց հոգեոր իշխանութեան իրաւասութեանն ու կարգադրութեանը։ Դեռ այժմ էլ թէ Ռուսաց թէ Պարսից և թէ Թուրքաց պետական օրէնքներով հայ եկեղեցին իրաւատէր է ճանաչւած ամուսնական —պատկի և ամուսնալուծութեան—խնդիրների նկատմամբ։ Հայ եկեղեցու կողմից ամուսնութեան նկատմամբ ձեռք բերած բացարձակ այս իշխանութիւնը, սակայն; չի կարելի պնդել, որ միշտ հարթ կերպով է գործադրել կեանքի մէջ, Զի կարելի ասել, որ ժամանակի ընթացքում այդ խնդիրների շուրջը ծագած վէճները միշտ մի հետևողութեամբ և արգարութեան նոյն կցով են լուծումն ստացել, Ընդհակառակը, սխալ չի լինիլ ասել, որ յաճախ հոգեոր իշխանութեան զանազան ներկայացուցիչներ պատմութեան ընթացքում դուրս են եկել ժողովներով¹⁾ սահմանւած կարգերից և անձնական իշխանութեամբ և հայեցողութեամբ կարգադրել ամուսնական հասուչնասի և ամուսնալուծութեան խնդիրները։ Եատ ընական է, որ գործառնութեան տարրեր եղանակները հայ եկեղեցու կեանքի մէջ առաջ բերէին կամայականութիւնների մի ամբողջ սիստեմ։

Այսպէս թէ այսպէս, եկեղեցին մեր մօտ ձեռք է բերել ամուսնական խնդիրների նկատմամբ այդ իշխանութիւնը։ Խնչքան և եկեղեցական տարրեր հայրեր հակառակ լինէին ժողովով սահմանւած կարգերին և թոյլ չտային, որ նոքա կեանքի մէջ կիրառւէին, այսուամենայնիւ հնարաւոր չէ եղել ժոյութիւն ունեցող այդ սահմանումները արմատախիլ անել: Ցշմարիտ է, միջին դարերի երկրորդ կիսում ու նոր դարի և նորագոյն ժամանակների նոյնիսկ շեմքում—մեզ շատ մօտ նոյնիսկ ժամանակներում—մոռացութեան են մատնւած եղել հայ ժողովների կանոնները, ձըդտումներ են, եղել եկեղեցա-կրօնական իրաւաըմբռնողութիւնը

1) Պատմական մի իրողութիւն է, որ թէ պետական և թէ եկեղեցական կանոններ սահմանելու իրաւունքը պատկանել է հայ ժողովրդին իրեն և ի դէմս նորա ազգային ժողովին։ Հայ անցեալում ժողովն եղել է մի զօրեղ ինստիտուտ։ Դրա համար էլ երբ գործել է ժողովը, նրա վճիրները՝ համապատասխանել են—ամուսնական խնդիրներում—աշխարհիկ իրաւաըմբռնողութեան, իսկ երբ նոքա դադարիլ են գործելուց, նրա տեղը բռնիլ է այս ու այն հոգեոր հօր բարեհայեցողութիւնը։ Իրաւունքը քնիլ է, կամայականութիւնը գործել:

զերջնականապէս օրէնք դարձնել կեանքի մէջ, սակայն, ապարգիւն վերջին տասնամեակների պատմութիւնը ցոյց է տալիս, որ ամուսնական հասուչնասի և ամուսնալուծական ինսդիրների լուծումը բռնել է ազգային ժողովների սահմանումների համապատասխանելու ճանապարհը: Աշխարհիկ իրաւաըմբռնողութիւնն ու աշխարհայնողութիւնը մի անդամ էլ շեշտում են եկեղեցու իրաւասութեան ենթակայ խնդիրների կարգաւորման գործում: Ամուսնութեան լուծելի լինելու գաղափարը տանում է յազթանակը վերջնականապէս: Դրա դէմ անցեալ դարի 80-ական թւականներին յարուցած բայց ուշացած հալածանքը յաջորդ տասնամեակում յետ է մզւում անդառնալի կերպով: Ինչպէս և թեթեանում են հաս ու չհասի արգելքները:

Այս ըոլորից մնում է իրը մի անխախտ սկզբունք—ամուսնութիւնը հայերի մօտ եղել է և կայ իրը եկեղեցական-կրօնական մի ակտ, որքան և նրա մէջ աշխարհիկ իրաւաըմբռնողութեան գորեղ հետքեր իր մէջ պարունակի, եկեղեցին է պատկողը, եկեղեցու պատկն է օրինականն ու վաւերականը. առանց եկեղեցու տեղի եկած ամուսնութիւնը կենակցութիւն է միայն, նա իրանից չի հետեցնում իրաւաըմբռնողութիւններ. ոչ մարդու և կնոջ և ոչ էլ նրանցից ծագած սերունդի մէջ չեն կարող իրաւական յարաբերութիւններ առաջ գալ. որոնք ծագում են օրինական ամուսնութիւնից ու նրա տեղի ունենալով են պայմանաւորւում:

§ 12.

ՀԱՅԵՐԻ ՄԻԱԿԻՆ ԼԻՆԵԼՆ ՈՒ ԲԱԶՄԱԿՆՈՒԹԵԱՆ ՍՈՎՈՐՈՅԹ-ՆԵՐԸ

Ամուսնութիւնը կենսարանական և սօցիալական երեսյթ լինելուց ջոկ նաև մի իրաւաըմբռնողութիւն է, իրը այդպիսին նա կարող է լինել միակին (Monagam) և բազմակին (polygam). միակին է կոչում այն ամուսնութիւնը ուր նա կազմւած է մի կնոջից և մի մարդուց: Բազմակին է այն ամուսնութիւնը, ուր մի մարդը մի քանի կին ունի. բայց այս դէպքում ամուսնութիւնը բնորոշողն այն չէ յատկապէս, թէ մի մարդ քանի կին ունի, կամ քանի կին է առել, այլ այն թէ այդ ամուսնութեան մէջ թնչ իրաւական յարաբերութիւն կայ մարդու և նրա ունեցած կանանց մէջ, նթէ մարդու յարաբերութիւնը ա. կնոջ հետ նոյնն է ինչպէս և բ, գ, դ և այլն կանանց հետ, որից հաւասար իրաւական գրութիւններ են ծագում, հապա այդ ամուսնութիւնը բազմակին

Հ. Բայց սա դեռ բաւական չէ. մարդու իրաւական յարաբերութիւնից դէպի իր առանձին կանայք պէտք է առաջ բերեն ընտանիքի մէջ նաև հաւասար իրաւական գրութիւն այդ տարրեր կանանցից ծագած սերունդների մէջ, եթէ մի բազմակին ամուսնութեան մէջ իրաւական այս հաւասարութիւնը գոյութիւն չունի, այսինքն եթէ օրինաւոր պատկով ծագութիւն առած, բայց զանազան մայրերից ծնած բոլոր զաւակները հաւասար իրաւական դիրք չեն ստանձնում ընտանիքի մէջ, օրինակ հօրը ժառանգելու խընդրում, ապա այդ ամուսնութիւնը բազմակին չէ: Այս բոլորից պարզ է, որ ընտանիքի բազմակին լինելը որոշում է այն իրաւական յարաբերութիւնը, որ կայ մի կողմից մարդու և կանանց մէջ և միւս կողմից հօր և նրա կանանցից ծագած զաւակների մէջ: Բազմակին ամուսնութեան մէջ բոլոր զաւակները ժառանգում են իրենց հօրն այնպէս, ինչպէս որ միակին ամուսնութեան մէջ մի կնոջից ծագած զաւակները: Երկու դէպութիւն էլ գործում է միևնույն իրաւաըմբռնողութիւնը՝ օրինաւոր ամուսնութիւնից ծագած զաւակները ժառանգում են իրենց հօրը հաւասար իրաւունքներով: Ընթերցողը թող միշտ ի նկատ ունենայ, որ մենք ամուսնութիւնն իրը մի իրաւական ինստիտուտ ենք հարցանիրութեան խնդիր դարձնում:

Այսպէս ուրեմն, մի ամուսնութեան միակին և բազմակին լինելը որոշում է այն իրաւական յարաբերութիւնը, որ կայ մարդու և կնոջ (կամ կանանց) և հօր ու զաւակների մէջ: Թէ այս բացատրութիւնը բաւ լինի միակին և բազմակին ամուսնութեան հութիւնը հասկանալու համար:

Հայ իրաւունքի պատմութիւնը պարզ ցոյց է տալիս, որ հայ ընտանիքը հիմնապէս միակին է: Հայկական ամուսնութեան իրաւունքի հետազոտողն եթէ ծանօթ է արիական միւս ազգերի նոյն հիմնարկութեան էութեան հետ, նա կտեսնի, որ զոցա հետ և հայկական ամուսնութեան ինստիտուտը զեկավարում են հիմնական միևնույն իրաւաըմբռնողութիւններով: Հայ ընտանիքն էլ նոյն հիմնազերովն է միակին, ինչպէս այդ տեսնում ենք միւս արիական ազգերի մօտ, սկսած հին հնդիկներից մինչև հին յոյներն ու հռոմայեցիք: Զնայած այս հանգամանքին և արիական ազգերի մօտ իշխող այդ հիմնական իրաւաըմբռնողութեանը, նոյն արիների մօտ, զոցա թւում նաև հայերի մօտ գոյութիւն ունին, այսպէս ասած, բազմակնական սովորութիւններ: Սրա էութիւնը կայանում է նրանում, որ օրինաւոր կնոջ կողմին թոյլատրելի էր նաև այլ կանայք պահել, բայց որոնք, սակայն, հարճեր են, ու օրինաւոր կնոջ աստիճանին չեն համսնում: Դոցանից ծագած սե-

բունզը պատկանում է օճաղին, սակայն տան անդամ չէ, նա չի կարող տանուտէրին ժառանգել, չարճերի (կոռկանու) քանակը չի փոխում և ոչ մի հանգամանք, իրը ամուսին ճանաչում է միայն օրինաւոր ամուսնութեամբ ձեռք բերած կինը։ Հին հնդիկները միակին էին, սակայն նոցա դատաստանազիրքերը թոյլատրում էին օրինաւոր կնոջ մօտ դահել նաև հարճեր։ Նոյնպիսի միակին էին յոյներն ու հոռմայեցիք, բայց նորա էին միննոյն ժամանակ բազմակին այն մաքով, որ թոյլատրելի էր պահել հարճեր։ Սակայն կինը մէկն էր, ու միայն օրինաւոր այդ կնոջից ծագած ժառանգն էր շարունակող հօր տանուտիրութեան։ Նոյնն ենք տեսնում նաև հայերի մօտ, նամանաւանդ հայկական իշխանական տների մէջ, ուր մի օրինաւոր կնոջ մօտ պահում էին նաև հարճեր։ Բազմակինական այդ սովորութիւններն իրենց զգալ են տալիս նոյն իսկ մեր օրերում։ Նոր թայագիտի և Սիւնեաց գաւառներում ինչպէս և այլ տեղեր, անսովոր բան չէ, երբ արդէն ամուսնացած մի մարդ իր օրինաւոր կնոջ կողքին պահում է, առանց պատկի ինարկէ, նաև մի երկրորդը։ Դէպքերի մի որոշ տոկոսն իրենց հիմքն ունեն օրինաւոր կնոջ ամլութիւնը։ Սխալ կլինէր բազմակինական այս սովորութիւնները մահմեղականութեան աղգեցութեամբ բացատրել, քանի որ մեզանում, նախ քան մահմեղական տիրապետութիւնը, նոյնպիսի սովորութիւնների գոյութիւնը պատմական իրողութիւն է։

Քերենք պատմական մի քանի տեղեկութիւններ, որոնք, թէկուր իրենց գրւելու ժամանակի համար, կարող են որոշ ըմբռնողութիւնների ապացոյցներ նկատել։

ա. «Զի չուեաց խաղաց զնաց Հայկն ՚ի Բարիոնէ կնաւն և որդւովք և ամենայն աղխիւն հանդերձ Սիրէսո, երես Յ։

բ. «Եւ Շամիրամ կինն Ասորուց արքային Նինոսի ...կամեցաւ առնել ընդ նմա (Արա Գեղեցկի մասին է խօսքը) բարեկամութիւն, որպէսզի կատարեսցէ զկամն նորա պոռնկութեամբ... իսկ Արայն ոչ զպատարապն նորա ընկալաւ և ոչ յանձն առնու երթալ ՚ի Նինուէ առ Շամիրամ... Անդ երես Յ։

Թրիստոնէութեան ժամանակաւ պատմական տեղեկութիւնները, Փաւստոսի և այլոց մօտ, թողնենք, նոքա մի աւելորդ անգամ էլ ապացուցում են, որ քրիստոնեայ հայերի մօտ բազմակին սովորութիւնները յաճախ կրկնուող երեոյթներ են եղել, Դառնանք առաջ բերած պատմական քաղաքացներին։

Ըստ հազարեան աւանդութեան, Հայկը ճանաչում է հայ ժողովրդի նախանայրը, կականն այն չէ, թէ արդեմք Հայկը մի պատմական անձնաւորութիւն է, այլ այն, որ նա ըստ այդ աւան-

դութեան միակին է եղել նոյնն է եղել և Արա Գեղեցիկը։ Արայի մասին եղած այդ տեղեկութիւնն ասում է, որ վաւաշոտ Շամիրամը ցանկացել է Արային, իսկ վերջին չի համաձայնել նրա կամքը կատարել, որից ծագել է Արայի համար ողբերգական վախճան ունեցող պատերազմը։ Հսոյ նոյն աւանդութեան Շամիրամը Հայաստանի կառավարիչ է նշանակում Արայի սիրելի կնոջ նւարդից եղած որդուն՝ Արայեան Արային, Այս ամբողջ պատմութիւնը կարելի է մերժել, բայց մի ըմբնողութիւն կմնայ միշտ անմըստելի։—որ հայ ցեղապետը, որ արգէն մի սիրելի կին ունի, չի ցանկալ աշխարհի և ոչ մի կնոջ, եթէ այդ կինը նոյնիսկ հզօր, աշխարհներ իշխող մի թագուհի լինի, մի ամենազօր Շամիրամ։ Եթէ Սերէսոսի այդ կտորը վերցւած ժողովրդական աւանդութիւնից, հայ ժողովրդի բան ու խօսից հապա ուրիմն նրա մէջ պատկերաւորւել և արտացոլել է նոյն այդ ժողովրդի աշխարհայեացքն ամուսնութեան մասին։

Պատմագիրների այս տւեալները քրիստոնէութեան ազդեցութեամբ բացատրելն անտեղի կլինէր, քանի որ նոյն պատմագիրների մօս գտնում ենք նաև բազմակինութեան սովորութիւնների տւեալներ։ Բներենք հայերի ոչ քրիստոնեայ շրջանի, բայց քրիստոնեայ մի պատմագիր մի քաղաքածք։—

դ. «Սա (Սաթենիկ) առաջի եղեալ ի կանանցն Արտաշեսի՝ ծնանի նմա զԱրտաւագդ և այլս բազումու... Մ. Խորեն. Ա. 50. 180 երես։ Բնագրից երևում է բաց որոշ կերպով, որ Արտաշէսը (62—107 ն. ք. թ.) բազմակին է, նրա առաջին կինը—Տիկնանց տիկինը։ Յետագայ պատմութիւնը ցոյց է տալիս, որ Արտաշէսին յաջորդում են Սաթենիկից ծնած որդիքը—Արտաւագդն ու իւր եղբայրները։ (Մ. Խոր. Ա. 62). Այսաեղ հարկաւոր է յիշել, որ թէ հայ Արշակունիները և թէ իշխանական տները նոյն ձեփ միակին էին, ինչպէս և բոլոր Արիները—հնդիկները, յայները, հոռմէցիք, և այնու Այսինքն, մի օրինաւոր կին-տանտիկին, տիկնանց տիկին-ունենալուց յետոյ, նրա կողքին ունեցել են նաև այլ կանայք, որոնք, սակայն, ինչպէս և նոցանից սերած սերունդը նոյն իրաւական յարաբերութեան մէջ չեին դէպի ընտանիքի հայրն ու տանուտէրն, ինչպիսի իրաւական յարաբերութիւն որ կար վերջնիս և նրա տիկնոջ-տանտիկնոջ և այդ տիկնոջից սերած զաւակների մէջ։ Միայն տանտիկինն էր ստանձնում ամուսնու և տանտիբունու պարտաւորութիւններն ու իրաւունքները։

Հայոց հին զրականութիւնը մեզ պահել է զանազան տիկնիքական անւանումներ, որ չեմ վարանիլ այսաեղ առաջ բերել կանանց—կանանց բաժանմունք։ նաժիշտ, աղախին, հարճ, վար-

ձակ։ Նաժիշտ և աղախին ունեն կին ծառայի նշանակութիւն, աղախին կարող է և կին նշանակել, ամենահաւասնօրէն նաև այն կինը, որ օրինաւոր կողմից ջոկ ունէր տանուտէրն իր տան մէջ։ Հարճ և վարձակ կարող ենք անւանել հօնկաբինե։ Նաժիշտ և աղախին տան անդամ էին այնպէս, ինչպէս տան ու տեղի մէջ մտնող արժէք։ Հայ աղջկերք ստանում էին իրք բաժինք նաև նաժիշտ ու աղախին։ Հարճն ու վարձակն ստորին աստիճանի կանայք էին, ոչ նոցանից և ոչ էլ աղախինուր յարուցած զաւակները կարող էին յարուցանողի հարազատ զաւակները կոչւել ու վերջիններին վերապահւած իրաւոնքներովն օգտւել։ Նոքա պատկանում էին տանը, ենթարկում էին տանուտիրոջ իրաւասութեանը, բայց նոքա—ոչ օրինաւոր կանանցից ծագած այդ զաւակները—չէին կարող նրա տանիտիրութիւնը շարունակողները լինել։

§ 13.

ԱՌԵՒԱՆԴՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՄՈՒԾՆՈՒԹԻՒՆ

Ամուսնութեան ծագման պատմութիւնը այդ ինստիտուտի առաջ գալու շատ պատճառներ է ճանաչում, նայելով թէ, ով ի՞նչ տեսակէտով է մօտենում նրան։ Ամուսնութիւնն անպայման մի կենաբանական (բիոլոգիական) երևոյթ է՝ իր ամենատարրական ձևով էզի և որքի կենակցութեան հանգամանքով։ Նա մի սոցիալական երևոյթ է, երբ նրան վերցնում ենք իրք մի ընկերակցութիւն, երբ նրան նայում ենք իրք մարդու և կնոջ համախմբւելու ընկերակցելու բարձր գիտակցութեան արդիւնքի վրայ։ Նա կենաքի մի իրաւական (կամ իրաւական-սոցիալական) խոշոր երևոյթ է, երբ նրան նայում ենք իրաւական յարաբերութեանց պրիզմայով, որոնք գոյութիւն ունին մի գոյգ կազմած մարդու և կնոջ մէջ։ Ամուսնութեան մէջ առաջին մոմենտն անպայման կերպով կենաբանական է, բայց այնուամենայիւ զա շատ ու շատ քիչ քան է բացատրում։ այդ մոմենտից մինչեւ ամուսնութեան ինստիտուտը շատ հեռու է։ Սոցիալական մոմենտի մէջ մտցնում է և տնտեսական խոշոր մոմենտը, բայց տնտեսական մոմենտն առանձին վերցրած, չի առում ու բացատրում այն բոլորն, ինչ որ առում է մեզ ամուսնութիւնն իր ամբողջական ըմբռնողութեամբ։ Ամուսնութեան հիմքում կայ նաև մի խոշոր մոմենտ, զա իրաւականն է ևլ չեմ ասում, որ ամուսնութիւնն իրք ընտանիք իր նշանակութեամբ պայմանաւորւում է տնտեսական, իրաւական և մտաւոր-բարոյական մոմենտների համագործակցութեամբ։

Բայց թողնենք մեր մտքերի շարայարութեան այդ ուղին և դառնանք խնդրի նկարագրութեան անմիջական թելին և աշխատենք ցոյց տալ, թէ ինչ ամենամերձաւոր մոմենտներ առթել են ամուսնութեան ինստիտուտի երեան գալը:

Թէ տնտեսական, թէ իրաւական և թէ այլ երեսյթները իրենց ասղմանային վիճակում կարող էին կեանքի մէջ գոյութիւն ունենալ և մարդկանց խմբակցութեան մէջ գործել, առանց որ այդ խմբակցութեան մէջ ամուսնութիւնը գոյութիւն ունենար: Վերցնենք օրինակ մարդկային կուլտուրայի այն աստիճանը, երբ սերումը կատարում է մի ընտանիքի—մարդկային մի խմբակցութեան մէջ: Այդուեղ ամուսիններ չկան, այլ կան էգեր և որձեր, որոնք բոլորն իրար են պատկանում: Ամուսնութիւն չկայ նաև այն դէպքում, երբ երկու հարեան խմբերի էգերն ու որձերն են իրար հետ գուգործում, առանց որ մի խմբի էգ միւս խմբի մի որոշեալ որձի պատկանէր: Կենակցութիւնների այս ձեւի հակառակ, ամուսնութիւնն ենթադրում է մի որոշեալ էգի միայն մի որձի պատկանելը, այսինքն մի կնոջ մի տղամարդու պատկանելը: Արդ, Երբ հասաւ նախկին մարդն այդ գիտակցութեան, թէ մի տղամարդ պիտի տէրը լինի իր կնոջ: Ե՞րբ ծագեց այդ «իմր» սեփականութեան իրաւոնքի այդ հիմքը՝ ԶԵ որ, մարդկային միտքը մինչև չստեղծէր «իմր» և «թու» ըմբռնողութիւնները, չհասնէր մարդն այն գիտակցութեանը, թէ սա «իմր» է և սա գրունը, չէր էլ մարմանայ առնասարակ սեփականութեան իրաւարմբռնութիւնը, որ այնպէս անխորտակելի կուռք է դառել ներկայումս:

Առաջին մարդը, որ առեւանզման միջոցով ծնորք ընթաց մի կին, նու էլ հիմը դրեց ամուսնութեան ինստիտուտի: Ռւսումնասիրելով մարդկային կուլտուրայի ստորին աստիճանները, հասարակագիտութեան հիմունքները, բայց յատկապէս ամուսնութեան և ընտանիքի ծագման պատմութիւնը, ես էլ եկայ այն համոզման, որ առաջ բերածս ֆորմուլան ամենահամոզիչներիցն է: Ուզում եմ ասել, որ այն բոլոր հիմունքները, որոնք ամուսնութեան և ընտանիքի ծագման իրր պատճառներ են ճանաչւած, դոցա մէջ նախապատութիւնն առեանզման կողմն է: Մի տնտեսութեան շուրջը կարող էր մարդկային մի խմբակցութիւն կազմել, այդ խմբակցութիւնն ինքնին մի սօցիալական երեսյթ է, և որքան էլ նա նախնական լինի, այնուամենայնիւ նրա մէջ կնկատէին նաև իրաւական և մտաւոր բարոյական ըմբռնողութիւնների սազմեր: Վեստերմարկի և այլոց մօտ կարող ենք կարդալ, որ զոյգերով ապրելը կենդանական աշխարհի մէջ մի խիստ նկատած երեսյթ է, մարդն էլ իրը այդպիսին, կազմել է զոյգեր: Որքան և համո-

զիչ լինի այս տեսութիւնն, այնուամենայնիւ նոյնպէս նկատած երեսյթ է, որ կան կենդանիներ, որոնք զոյգերով չեն ապրում, և այն էլ համեմատաբար բարձր զարգացման հասած կենդանիներ, օրինակ, շունը, ձին, և այլն։ Այն էլ է փաստած, որ մարդկային կուլտուրայի սկզբնական առտիճաններում սերումը կատարւում է մի խմբակցութեան անդամների մէջ։ Մարդկային կուլտուրայի աւելի բարձր աստիճաններում, երբ ծագել է, այսպէս առած, սեռական ամօթի զգացումը, մի զգացումն, որ ծնունդ է սարսափի և երկիրդի զգացումների, մարդը որոնել է իր համար կին զրում։ Սրանից առաջ է եկել առևանգելու սովորութիւնը. միծ վանդներով ձեռք բերեած կինն սկսել է մնալ սեփականութիւն այն մարդու, որն և առևանգել է կնոջը։ Այն օրից, երբ առևանգած կինը վերապահել է առևանգողին, այն օրից էլ հիմն է դրւել ընտանիքի և ամուսնութեան Այսպիսի մի խնդրի լուծման համար հարկաւոր էր, որ մենք կանգ առնէինք աւելի երկար, որ մենք մանրամասն վերլուծութեան ենթարկեինք յարակից շատ երկոյթներ և խնդրիներ. բայց այդ բանը մեզ շատ հեռուն կտանէր։ Սա ամուսնութեան իրաւունքի ընդհանուր խնդրիներից մէկն է, ուստի և հայկական ամուսնական իրաւունքի մէջ աւելի ընդարձակ տեղ չի կարող զրաւել. դա չի թոյլ տալիս և հերկայ աշխատութեան ծաւալը։

Այսպէս ուրիման առևանգումը ճանաշենք ամուսնութեան և ընտանիքի առաջ գալու, գլխաւոր գոնէ, հիմունքներից մէկը. և այդ նաև այն գլխաւոր պատճառով, որ մարդն առևանգման միջոցով է որոշ իրաւունքներ իր փախցրած կնոջ վրայ ձեռք բերում. Այդ իրաւունքն իր սաղմնային վիճակումն իսկ ամփոփւած է հետեւալ խօսքների մէջ. — այս կինն իմն է։

Դասնանք հայ իրաւունքի խնդրիներին. —

Հին հայաստանում, ինչպէս և միւս արիների մօտ, առևանգման միջոցով ամուսնանալը շատ սովորական երեսյթ է եղել, դրա մնացորդները դեռ մինչի այժմ էլ զոյութիւն ունին հայ ժողովրդի մէջ. Առևանգման միջոցով կին ձեռք բերելն եղել է հայի համար պարձանքի մի բան, մի քաջութիւն, իսկ հայրենի իրաւունքան նորմերի տեսակէտից նաև ամուսնալու համար ճանաշւած մի միջոց։ Փախցնելու ակտը կատարելուց յետոյ, կայցած ամուսնութիւնը հաշում է լիապէս օրինական։ Առևանգման միջոցով, առևանգմած աղջիկը դառնում է տանափիկին ու ամուսին Պնման միջոցով կին ձեռք բերելու սովորութիւնը ծնունդ առնելուց յետոյ առևանգման սովորութիւնն սկսում է թուլանալ, թէև դեռ այսօր էլ ամուսնալու այդ երկու ձեերն էլ կողքի շարու-

նակում են գործել։ Մինչ հասարակ դասի մէջ գործում էր առեւանդման միջոցով կին ձեռք բերելու միջոցը, բարձր դասի մէջ նա անհետացել էր, դառել էր աւելի գործիկ միջոց՝ կին ձեռք բերելու համար։ Որքան և բարձր դասի համար ոսկին էր ամուսնութեան խնդիրը լուծում, ով տոհմիկ էր նա էլ տոհմի պատւին համապատասխան աւելի մեծ զին էր տալիս աղջկան, այնուամենայնիւ իւրաքանչիւր պսակւող հայրենի հին կարգերին վայել հարկը պէտք է տար։ Հայ տոհմիկն եթէ խրանում էր իր հարսնացուն փախցնելու միջոցով ձեռք բերել, նա, այնուամենայնիւ, հայրենի հին կարգերին հաւատարիմ, ձեռցնում էր մի առեանգում։ Դրա պատցոյցը մենք գտնում ենք պատմական հետեալ տւեալի մէջ։ —

«Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ, և հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն, և անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն, և ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝ ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց, և շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին, արագ հասուցանելով ի բանակն իւր։ Խորենացի լ. 50.

Այստեղ ի նկատ ունենանք, որ Արտաշէսը հաւանում է Ալանների օրիորդին, խնամախօս է ուղարկում նրա հօր բանակը, և քմորթ կարմիր, լայքայշատ և ոսկի բազում տուեալ ի վարձանո, առնու զտիկին օրիորդն Սաթենիկա անդ։ լ. 50. ինչպէս տեսնում էք, աս մի պարզ ամուսնութիւն է՝ գնման միջոցով։ Ժողովրդական երդի այն մնացորդով, Արտաշէսը առեանգում է իր հարսնացուին։ բայց իրօք, Արտաշէսը միայն ձեռցեր է այդ առեանգումը։ Այդտեղ նկարագրւած է մի հարսնառա. արդէն հարսնառն ինքնին առեանգման հետքեր է իր մէջ պարունակում։ Խորենացու նոյն զլիում վերջընթեր մի կտորից իմանում ենք, որ հարսնառը հարսի հօր տնից գնում է Շ'ի դրւոն տաճարին», ինչպէս այժմ եկեղեցի, և ապա փեսի տունն անշուշտ։

Աւելորդ եմ համարում ոչ միայն նկարագրել, թէ ինչպէս են աղջիկ փախցնում, այլ նաև փաստեր բերել առեանգման ներկայումս դեռ գոյութիւն ունենալու համար։ Այսքանը միայն ասեմ, որ աղողւած առեանգումը մի կողմից ամօթանք է բերում փախած կամ փախցրած աղջկայ ազգականութեանը, միւս կողմից, սակայն, փառք ու պատիւ է վաստակում փախցնողը։ Նրա արածը նկատում է իրը մի տղամարդութիւն։

Շատ բնական էր, որ հայ ժողովուրդը քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանների վրայ դէմ լինէր առեանգման միջոցով ամուսնանալու սովորութեանն, ու իր արգելքները որոշ իրաւանորմերի վերածէր։ Այդ խնդրով զրադել է Շահապիվանի

աղքային ժողովը ու իր 7-րդ կանոնով սահմանել է հետեւալը-
տ. փախցրած առևանգողից պէտք է վերցնել փախցրած աղջիկն-
ու յանձնել իր ծնողաց. բ. թէ փախցնողն և թէ նրա օժանդա-
կողները պէտք է տուգանւին դրամով. գ. աղջկայ ծնողները, որ-
իրենց աղջկան հսկելու պարտաւորութիւնն ունին, չեն տուգանւի-
ր եթէ աղջիկն իր կամքով է փախել. վերջին դէպքում պէտք է
տուգանւել աղջիկն ու նրան փախցնողը. Որքան և պարզ ու մեկին
են այս արգելքն ու պատիմները, անուամենայիւ նոքա ոչ մի
կամ շատ քիչ աղջկեցութիւն են ունեցել առևանգման հին սովո-
րութիւնն արժատախիլ անելու գործում:

Այսանդ հետեւալն էլ կուգէի հարցասիրել. — ընտանիքի ե-
տանուտեղի մէջ կինն ունի իրեն ոչ միայն յատուկ տեղն, այլ
նա տան տնտեսութեան մէջ իր որոշ դերն ու նշանակութիւնը. Ա-
ռեւանգման միջոցով ամեն մի տղամարդ ձեռք է բերում 'ի զէմս-
մի կնոջ նա և մի աշխատաւոր ձեռք, որ հարկաւոր է մարդուն
և տանը և նոյն խիկ կալի և դաշտային աշխատանքների համար.
Ասենք նաև, որ համայնական հոգատիրութեան ժամանակ, երբ
հոգը տրւում է գիւղական ամրող համայնքին, իւրաքանչիւր ըն-
տանիք հող է ստանում տան անդամների թւի համապատասխան:
Ամուսնութեան միջոցով, լինի զա առևանգման թէ գնման ձեռ-
րով, աւելանում է տան անդամների թիւը. որն և ի նկատ կտանւի
նոր հօգարածանութեան ժամանակ: Այս բանը զե՞ս գոյութիւն
ունի Շիրակի և Ղարսի նահանգի գիւղերում, ուր պետական հո-
գերը գիւղական համայնքների ձեռքն է, համայնական հոգատի-
րութեան հիմունքներով:

Ներկայում աղջկիկ փախցնելն ունի գիւղերում նաև տնտե-
սական մի պատճառ, այդպէս է եղել և անցեալում՝ գնման ձեռով
ամուսնութեան գործելու ընթացքում: Աղջիկ փախցնող տղան ա-
զատում է այն ծախքերից, որ անելու էր գնման ձեռով ամուս-
նալիքի: Փախցնելու դէպքում մի կողմից տղին ազատում է
աղջկայ համար նրա հօրը գիւղագին վճարելուց, նշանի և հարսա-
նեաց ծախքերից: բայց միւս կողմից էլ նրա փախցրած աղջիկը
դրկում է բաժինքից: Ինչ և լինի, գիւղական կեանքում երբեմն
մի քանի հարիւր բուրլու համար զիյազինը միշտ էլ ծանր է
վճարել, էլ չասենք հարսանեաց շատ ծախքեր: Այս բոլորն 'ի մի
հաւաքած, բոլոր պայմաններում էլ տղայի անելիք ծախքերը
առանց այլնայլութեան գերակշուռում են աղջկայ բերած բաժինքին:

§ 14.

ԳԱՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԵՒ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

1. Գևիան միջոցով ամուսնութիւն.—Այս ամուսնութեան էութիւնը նրանումն է, որ տղամարդն իր կինը ձեռք է բերում որոշ վճարով, որ գլխագին, անձին գին կամ վարձանք է կոչւում. ժողովրդական լեզուով բաշլ (գլխագին), Այս սովորութիւնն այժմ միայն գիւղերում է գործում և այն էլ շատ թոյլ կերպով. կարելի է ասել, որ նա իր անհետացման շրջանն է ապրում. Խնչպէս և անհետանալու վրայ է նաև աղջիկ փախցնելը, Խնչպէս մենք նշանագրութեան նկարագրութեան մէջ կտեսնենք, գնման միջոցով կին ձեռք բերելու սկզբնական-գնման-ակտը պարզ առետուրի բնոյթ ունի. և ինչպէս իւրաքանչիւր տուր և առ, այդ գնման ակտն կատարում է առանց աչքի զարնող ձեւականութիւնների. Գնման նշաններն են երկու կողմերի իրար ձեռք թոթուելը, գինի կամ օղի խմելն ու բանակի եմք բանաձեռի արտասանելը. Սոքա առեարի գլուխ գալու ոչ միայն նշաններն են, այլ նաև նրան կնքող, հաստատողներն են:

Թողնում եմ գլխագնի որոշման և քանակի մասի հետ նաև այլ մանրամասնութիւններ այստեղ յիշել: Հին սովորութիւնների մէջ աղջկան բարձր գին տալու մի պատմական տևեալ արգէն առաջ եմ բերել, դա Արտաշէս թագաւորի տւած զլիագինն է Ալանների թագաւորի աղջկան առնելու համար. Որքան և գնման ձեր վերացնում է առեանգումն, ուներկայ նշանագրութեան (թագաքներում) սովորութիւնները գնման միջոցով ամուսնութեան սովորութիւններն են գործելուց հանում, այնուամենայնիւ ամուսնանալու ներկայ պարզ ձեռի մէջ անգամ մնացել են թէ առեանգման և թէ գնման միջոցով ամուսնանալու սովորութեան հետքեր. Այդ հետքերն են փեսայի կողմից հարսին նշան տալն և հասնառի ժամանակ աղջկայ հոր տանը աղջկայ ձեռքը վերցնելը, որից յետոյ հարսնառի գէպի եկեղեցի և գէպի փեսի տուն գնալու հանդիսաւոր, աղմկալից, յայտարար ձեռվ թափոր-գնացքն է կատարուում: Նոյնն է և բոլոր արիական աղջերի մօտ:

2. Դասակարգային ամուսնութիւն.—Արիական բոլոր աղջերն էլ բայց նամանաւանդ հնդիկները, հին գարերում խստապէս հետեւել են այս սովորութեանը: Ամեն դասակարգ, միայն իր գասակարգից կարող էր կին վերցնել, կամ մարդ առնել: Նայեցեք ներկայ բարձր իշխանական և արքայական առների տնական բեղլամենաները և կտեսնիք, որ նոքա խստապէս հետեւում են դա-

սակարգային ամուսնութեան իրենց ցեղերի մէջ պահպանելու։ Ներկայիս գործող այդ կարգերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ հին սովորութիւնների մնացորդներ։

Խնջպէս բոլոր արքների մօտ նոցա թւում և հայերի մօտ գործել է դասակարգային ամուսնութիւնը։ Խնձ թւում է թէ, հայ ընտանիքի համեմատարար զորեղ կերպով շեշտւած պատական ոգին ի նկատ առած, կարելի է ասել թէ հայերի մօտ կաստայական ամուսնութիւնը քարացած մի օրէնք չէր ու խիստ կերպով չէր պահպանուում։ Դասակարգերի մէջ խառն ամուսնութիւնը խաղնելի չէր և որ աւելի ցածի դասակարգի մի աղջիկ առնելով մի աւելի բարձր դասակարգի մի տղայի, դրանով նա բարձրանում էր իր ամուսնու դասակարգի աստիճանին։ Այս առթիւ նկատ առնել ստորեւմ բերւած պատմական տևեալները։

Այն դէպքում, սակայն, երբ աղջիկն էր աւելի բարձր դասի, նա ամուսնութեամբ իր մարդուն չէր կարող և չէր էլ բարձրացնում ծագման իր աստիճանին, եթէ մարդը պատկանում էր աւելի ստոր մի զասի։ Ներկայ սովորութիւնների մէջ էլ մենք տեսնում ենք, որ տոհմիկն աշխատում է տոհմիկի հետ խնամենալ, հարուստը հարստի հետ։ դրա հակառակ չունեորներն ու, այսպէս ասած, ոչ տոհմիկը ձգտում են իրենցից բարձրին աղջիկ տալ առնելի Այսպէս է նոյն իսկ ամենազեմովկրատ երկներում, նոյն իսկ այն պիտութիւնների մէջ, ուր ազնւականութիւնը ոչ միայն իրը արտօնեալ մի զասակարգ չի ճանաչւում, այլ առաւարակ գոյութիւն անզամ չունի օրէնքի առաջ։

Հետեւեալ պատմական տևեալները կարող են որոշ չափով պարզել մեր հարցասիրութեան առարկան։ —

ա. «Տըրպատ ոմն անուն յազգէն Բագրատունեաց, ...զոր իւր փեսայացոյց արքայ Տիրան ի դուստր իւր յԵրանեակ։ Որ ատեցեալ զայր իւր դըրդատ, ...իւր թէ չընաղագեղ ընդ վատակերպոյ և քաջատումիկ ընդ վատթարազգուոյ ընակէ։ Ըսդ որ զայրացեալ Տրդատ, յաւուր միտում գանէ զնա սաստկապէս... հրամայէ քարշէլ արտաքս և ընկենուուլ ի սենեկէն։ Մ. Խորեն. II. 63.

բ. «Ղուկեանսոս կեսար... յետ մեռանելոյն Պերոպի նուռանեաց զէայս և արձակեաց զՏիգրան։ Ետ զմոփի զկոյս, զմերձաւոր իւր նաև կնութեան, զոր եկեալ ի հայս ի բաց թողու, և ի նմանէ լեալ պատմանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօրն իւրեանց... և կարգէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի անուանեսցին Արշակունիք։ Անդ. II. 64.

ս. «Եկեալ Տրդատայ յաշխարհս, առաքէ զԱմրատ առաջտ... ածել զկոյսն Աշխէն՝ զուստր Աշխաղարայ՝ իւր ի կնութիւն։ որ

ոչ ինչ նուազէր կոյսն արքային հասակի: Եւ հրամայէ գրել զիս
Արշակունի, և զգեցուցանել ծիրանիս, և թագ կապել, դի հարս-
նացի Արքայից: Անդ. լլ. 83.

Աշտիշատի քողովի որոշումներից, որ մենք արդէն գիտենք,
կարելի է ենթադրել, որ գեռ IV-րդ դարում Հայաստանում գոր-
ծում էր դասակարգային ամուսնութեան սովորութիւնը. այսինքն
նախարարական աները խնամենում էին իրար հետ և մերձաւոր աղ-
գակցութեան սահմաններում: Խնամենալու. դէպքում ազնւակա-
նութիւնն աշխատում էր դասակարգի շրջանից չդաւրս դար:

§ 15.

ԱԶԳԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՆԱՄԵՆԱԼՈՒ

ա. Ազգակցութիւն.—Որոշնետե հայ ընտանեկան կազմակեր-
պութիւնը արենակցական է, ուստի և նա արենակցական ազգա-
կանութիւնը մինչի մի որոշ աստիճանում պիտի ճանաչի իրը
մերձաւոր: Այդպէս է հին հնդիկների մօտ նոցա սրբազն գրքե-
րի տեքաներով, այդպէս է և միւս արիների մօտ: Արինակցա-
կան կապն երկար չի կարող շարունակել, այսպէս է եղել արի-
ների իրաւարմբռնողութիւնը: Զանազն ազգերի մօտ ընդհատ-
ման աստիճանը տարրեր է եղել, վեց բայց նամանաւանդ եօթն
աստիճանները ճանաչւել են իրը վերջին սահման: Այդտեղ ընդ-
հարւած է եղել արեան մերձաւորութիւնը, կապը, հայը ճանա-
չել է արենակցական կապի ընդհատման սահմանն եօթը (օխտը)
պորտը: Այս աստիճանները պէտք է հաշւել եօթն իրար յաջոր-
դող ծնունդներ՝ սկսած հօրից, ապա որդին, թոռը թոռնորդին,
թոռան թոռը, և այլն, մինչի եօթներորդ ծնունդը, Բայց սա,
իհարկէ, հաշիւ չունի հաս ու չհասական ինզրի հետ: Այստեղ
խնդիրը վերաբերում է արինակցական կապի տեսղութեանը, քա-
նի որ բոլոր արիների մօտ էլ երրորդ աստիճանի ամուսնութիւն-
ները սակաւ դէպքերում իսկ չորրորդ աստիճանի արենակցական
ամուսնութիւնն առնասարակ թոյլատրելի է եղել: Այս աստիճա-
նի պսակների դէմ արգելքներ յարուցւել են քրիստոնէութեան
ժամանակ, միջին դարերում:

Ազգակիցներ են ուղիղ գծով դէպի վեր և դէպի վար ծա-
գած բոլոր արենակիցները: Այսինքն մի կողմից դէպի վեր հայ-
ը, պապը, պապի հայրը, պապի պապը, և այլն, միւս կողմից
դէպի վար որդին, թոռը, թոռնորդին, թոռի թոռը, և այլն: Ազ-
գակիցներ են նաև կողմնակի՝ թէ տղամարդոց և թէ կանանց

գծերով ծնունդ առած բոլոր սերունդները։ Աղքակիցներ են հաշում, որոց տարրերութեամբ, նաև տարրեր մայրերից և մի հօրից, ու տարրեր հայրերից ու մի մօրից սերած զաւակները։ Բայց որովհետև այս վերջին դէպքերում ծնողներից մէկը խորթէ, ուստի և հայ լեզուն տարրեր տեխնիքական անւանումներ է դրել միենոյն ծնողից սերած զաւակներին։ Մինչ միենոյն հօրից և մօրից ծագած զաւակները կոչւում են հարազատ, ստիր, արինակից, միենոյն հօրից, բայց տարրեր մօրերից և միենոյն մօրից, բայց տարրեր հայրերից սերած որդիները կոչւում են խորթ։ Խնչպէս մի անգամ աւածէ, հարազատ հայրն ու մայրը միասին կոչւում են ծնող, նոյն է և ուստիրէնում։ այդ բառի միտքն այնպէս է, որ իրը հայրն ու մայր զաւակին միասին են ծնում, երկուն էլ ծնող են։ Սորանից, ինչպէս ասել ենք, ծագում է հօր և մօր հաւասար իրաւունքներն իրենցից սերած որդոց վրայ։ Միջն զարերում հայ եկեղեցականի հնարամառութիւնն արենակցական կառ է գտել նաև մի զոյդ մարդ ու կնոջ նախկին ամուսնութիւնից սերած զաւակների մէջ, ու վերջիններիս ամուսնութիւնն արգելել է արենակցական խորթութեան պատճառով։ Մինչդեռ այդպիսիների մէջ արենակցութիւն չկայ. այդպիսի ենթագրեալ խորթ քոյր ու եղբայրներն իրար վերաբերմամբ զանուում են խնամութեան չորրորդ աստիճանում։ Աստիճաններ հաշւելու եղանակի մասին իր տեղում, ուր ուշիմ ընթերցողը կտեսնի, որ իրարանչիւր ծնունդ մի պորտ կամ աստիճան պէտք է հաշւելու միշտ այնպէս, ինչպէս զա ընդունած է հոսմէական իրաւունքի մէջ։

Հստ Հայոց հին և ժողովրդական իրաւունքի որոշուում են նաև հետեւեալ ազգականութիւնները։ — Կաթնեղբայրութիւն, կընթահյութիւն, քաւորութիւն, քոյր ու եղբայրութիւն, ողջում եղբայրութիւն (եկեղեցում, ողջոյնի ժամանակ), ողջոյն տալ առնել և եղբայրանալ), արեանեղբայրութիւն և հոգեորդութիւն։ Կաթնեղբայր են երկու ծեկերներ, որ միաժամանակ մի կնոջ ծիծ են ծծել. դոցանից մէկն անպատճառ ծիծ տևող կնոջ զաւակը պիտի ափ լինի, թոյր ու եղբայր են դասնում մի հանդիսաւոր օր կամ եկեղեցում և կամ որևէ է ուխտատեղում, ուր մի այդպիսի զոյդ իրար քոյր ու եղբայրութիւն են ուխտում։ Կնքահայրութիւն առաջ է գալիս մէկի զաւակը մկրտելիս, մանկանը գիրեն առնել և հոգեորդ խնամակալութիւն խոստանալ արարողութեամբ։ Արեան եղբայրութիւնը ձեռք է քերւում արհեստական միջոցով մարմնի որևէ մասից—սովորաբար թեից—մի քանի կաթ արիւն հոսեցնելով. այս դէպքում կամ թոյլ են տալիս, որ արեան կաթիլներն

իրար վրայ թափւին և իրար խառնւին, և կամ թևերի վիրաւոր կէտերը զնուում են իրար վրայ և այդպիսով են արեան խառնւելու միաւորւելու առաջ բերում: Պատահում է, որ այդ երկու գործողութիւններն էլ միաժամանակ են տեղի ունենում. այսինքն և արիւն են իրար վրայ կաթեցնում, և վիրաւոր տեղերն են իրար հաղորդել տալիս: Հոգիորդութիւնը կամ հոգեոր որդիութիւնը չպէտք է շփոթել որդեգրութեան հետ. դոքա իրարից բոլորովին տարբեր են: Արիական հին իրաւունքի մէջ, բայց նամանաւանդ հնդկական սրբազն գրքերի մէջ յիշում է վարպետ և աշակերտի փոխադարձ յարաբերութիւնն իրը հոգեոր ծնողի և հոգեոր որդու յարաբերութիւն: Սոյն իրաւաըմբոնողութիւնը մէնք գտնում ենք լիուլի հայ հին հասկացողութիւնների մէջ, որ պարզ կերպով դրոշմած են ձեռագիր յիշատակարունների, հոյ մատենագիրների մէջ, և այն: Այս առթիւ եթէ ցանկայինք պատմական տւեալներ առաջ բերել, հարկ կլինէր երեաներ լցնել: Հոգեոր ծնողն եմ, հոգեոր հայրն եմ, խիստ յաճախ կրկնւող տեխնիքական արտայայտութիւններ են, ու միշտ խօսքը վերաբերում է վարպետի և աշակերտի, ուսուցչի և աշակերտի փոխադարձ յարաբերութեանցը: Ներկայիս մեռնող հին սովորութիւնների մէջ էլ, որևէ արհեստաւորի մօտ աշակերտ մտած մէկն իր վարպետի վրայ նայում էր իրը իր հոգեոր ծնողի, հոգեոր հօր վրայ:

Հայ եկեղեցու իրաւաըմբոնողութեամբ հոգեոր ազգակցութիւն առաջ է գալիս մկրտութեան միջոցով կնքահօր և սանիկի մէկ կողմից և կնքահօր և սանամօր մէջ միւս կողմից: Այդպէս է և պսակի քաւորի և պսակը զոյգի մէջ, ուստի և ամուսնութիւն քաւորի և սանիկի, քաւորի և սանամօր մէջ և զեր աւելի հեռաւոր զենքում արգելում է եկեղեցու կողմից:

Հայ հին իրաւունքի ինստիտուտներից մէկն է նաև պսակի քաւորութիւնը: Արիական ազգերի իրաւունքներից օրինակ գերմանականի մէջ յայտնի է ընտրւած խնամակալի (der eukorene Vortrude): Այդ ինստիտուտը¹⁾: Այդ ինստիտուտն, գերմանականի մէջ, ընտրում են պսակւող կողմիրը. նոյնը տեսնում ենք և հայկական իրաւունքի մէջ: Ներկայումս գործող սովորութիւնն առում է, որ քաւորին ընտրում է փեսացուն, բայց քաւորի ով լինելու մասին աեղեկացնուում է աղջկայ կողմին: Բայ ժողովրդական սովորութեան, քաւորը ոչ միայն միջնորդն է երկու պսակւածների մէջ, շատ անգամ նոցա մէջ ծագած գետութիւնները վերացնելով, այլ նաև որոշ չափով կնոջ շահերի պաշտպանը: Եթէ

¹⁾ Sohm. Das Recht der Eheschließung S. 72.

որեւէ կին իր մարդու վաստ վարւեցողութեան համար մէկին դիւմում է, այդ մէկն ամենից առաջ քաւորն է լինում անշուշտ։ Թառըրի անմիջական պարտաւորութիւնն է, ոչ միայն ներկայ լինել պատկին և գործունեայ մասնակցութիւն ցոյց տալ ամրող հարսնաուի և հարսանիքի ընթացքում, այլ նաև անհրաժեշտ ներկան և վկան լինել աղջկայ հօր տանը հարսին՝ փեսային յանձնելու դործողութեանը։ Ոչ մի հարսնառ և ոչ մի եկեղեցական պատկի չի կարող ունենալ առանց քաւորի անմիջական ներկայութեան։ Նա պատկի անհրաժեշտ վկան է։ Հայկական ըմբռնողութեամբ պատկի ժամանակ կին քաւոր անթոյլատրելի է, և այդ թերեւ եկեղեցու ազգեցութեան չնորհիւ։

Բ. Խնամիութիւնն—

Խնամիներ են նորա, որոնք իրար մէջ աղջիկ են տւել առել, առել է հարսի և փեսի կողմների բարեկամները։ Բայց իսկապէս խնամիանում են իրար հետ ոչ թէ երկուստեք բարեկամներն, այլ իրար առնող աղջիկն ու տղան։ Վերեկի տեսակի ըմբռնողութիւնն ազգային եկեղեցու կողմից մի քիչ տւելի խիստ ձեաւորութիւն է ստացել այն առմամբ, որ երկուստեք խնամիները ճանաչւել են մինչի մի որոշ աստիճանի ազգակիցներ։ Այս իրաւաբրնողութիւնը զուտ հայկական է, ու իրը այդպիսին հայ եկեղեցական-կրօնական։ Խնամիների միջի չհասութիւնն օտար է ոչ միայն ազգային իրաւունքին, ոչ միայն միւս եկեղեցիներում և ժողովրդների մօտ գոյութիւն չունի, այլ նոյն իսկ հայ եկեղեցու կանոնական իրաւունքի մէջ ոչ մի հիմնաւորութիւն չի կարող գտնել։ Այդ չհասութիւնը ծնունդ է միջնազարեան, այն էլ նրա ելքի, հոգեոր հայրերի մտածողութեանն Հայ հին իրաւունքն ու հայոց եկեղեցական-ազգային ժողովների կանոնները ճանաչում են խնամէկական միայն երկու չհասութիւնն հարսի և տաքեր մէջ ըստ Աշտիշատի 365 թիւ ժողովի, և զորանչի ու փեսի մէջ, ըստ Շահապիվանի ժողովի 12-րդ կանոնի։ Ինչպէս և չհասութիւն հարսի և սկսարայրի մէջ, հետևողութեամբ Շահապիվանի յիշածա կանոնի։

Հստ հայ իրաւունքի խնամութիւնը ծագում է նշանազրութեան մոմենդից։ Ամունալուծութիւնն այդ խնամիութիւնը¹⁾ չի վերացնում, քանի որ ամունութիւնից ծագած զաւակների համար իրենց ծնողների երկկողմի ազգականները շարունակում են մնալ իրը ազգականներ։ Դրա հակառակ, եթէ այդ բաժանւած ամու-

¹⁾ Այդպէս է և գերմանական իրաւունքի մէջ։ համեմատել Sohm. das Recht der Eheschliessung. S. 6.

սինները վերստին ամուսնանան ուրիշների հետ, ու այդ ամուսնութիւնից զաւակներ սերլին, այս վերջին զաւակների մէջ ոչ մի ազգակցութիւն առաջ չի գալ: Այդպիսիների մէջ ամուսնութեան ոչ մի արգելք չկայ ոչ կանոնական և ոչ էլ հայ ցեղական իրաւունքի նորմերով: Նման դէպքերում հայ եկեղեցական վարչութիւնը վարուում է շատ տարբեր ձևով, բայց և ոչ մի դէպքում նրա վճիռները չեն յենուում հայրենի եկեղեցու սահմանած կանոնների վրայ:

§ 16.

ՀԱՏԱՆԻՐԻ ՄԷՋ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԻՐԱՀԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Հնդիկ հայրն իր որդու պսակից յետոյ, երբ հարմանառը տուն է մտնում, զառնում է նորահարսին հետեւել խօսքերով. «Տուն մտիր, որպէսզի տանտիկին լինես»¹⁾: Դրանով փեսի հայրն ընդունում է նորահարսին իր տունն ու միաժամանակ նրան տանտիկին յայտարարում, որից յետոյ է միայն մի նոր տուն և տանուուրիրութիւն հիմնելու խորհրդանշանը վառուում. զա սուրբ կրտկի կողցնելն է նորապսակների հայրենի կրտկարանից վերցրած կրտկով: Նոյնը գտնում ենք լիովին և հայերի մօտ: Հարմանառին դիմաւորում է փեսի մայրը տան մուտքի առաջ մի զոհարերութեամբ. նա մի զոյգ լաւաշ է փռում նորապսակների զիլիին, ապա նորաներս են մտնում տուն, ուր նրանց դիմաւորում է տան կրտկարանի (թորոնի) առաջ փեսի հայրը: Հին հնդկացու նման հայ հայրն էլ դիմում է հարսին աւանդական մի խօսքով, այն է «քարով եկար, ոսքդ բարի լինի, այս օրւանից դէնն այս տունը քոնն է, եզիր բախտաւոր»: Այս տունը քոնն է խօսքերով, սիմբօլիք կերպով շեշտաւում է նորահարսի տանտէր և տանտիկին զառնալու հանգամանքը: Թէ հին հնդիկը և թէ հայ հայրն այդ բանաձեկի արտասանելով ոչ միայն նոր զոյգին իրենց իրաւունքների և պարտաւորութեանց սահմանի մէջ են մտցնում, այլ զրանով նաև հայրենի իրաւանորմերին պատշաճաւոր հարկն են տալիս, իրենց բերանով իրենց կողքին իրենց հաւասար մի տանուտէրի և տանտիրութեան առաջ զալը հրապարակապէս և յայտարարելով և միենոյն ժամանակ ընդունելով:

Հայ ընտանիքի կազմակերպութեան մէջ, արդէն ասել ենք, որ կինը ամուսնու կողքին՝ նրան հաւասար տեղ է բանում. այդ

¹⁾ Leist; Graeco—It. Rechtsgeschichte, S. 55.

բանը խորհրդանշում է հարսի և փեսայի կրակներով՝ հարսանիքի միջոցով մի նոր հիմունած տաճուտիրութեան կրակարանի կպցնելովը։ Այս մասին այլ ևս չերկարացնենք, անցնենք հարկաւոր խնդիրների շարայրութեանը։

Հայկական ժողովրդական մի ասացւած կնոջ մահը համեմտառում է տան կրակի հանգելուն¹⁾, իսկ տան կրակի հանգելը մենք դիտենք, որ հին արիների համար մի մեծ դժբախտութեան նշան էր։ Մեռնող կնոջ մարդը ողբում է իր կնոջ մահն այս խօսքերով։ — ունչկը չօւնիմ օճապ վասի, մէկը չունիմ տանս կրակ անի, ճրագ վասի։ Իսկ մենք զիտենք, որ կնոջ վրայ էր ընկնում տան սրբազն կրակի անցէջ պահելու պարտականութիւնը։ Եթէ մենք համեմտաելու լինինք ժողովրդական այդ ասացւածները հնդկական սրբազն զրգերի մէջ նոյն նիւթի մասին եղած հրահանգութիւնների հետ ըստ էութեան, հապա մենք կտեսնենք, որ հայկական ժողովրդապահան այդ նիւթերի մէջ պահպանւած են միւնոյն իրաւաըմբանողութիւնները։

Կինը ողբում է իր ամուսնու մահն իր թագն ու պսակի, իր արիրջն ու պահպանի, իսկ մենք զիտենք, որ մարդու վրայ է ընկնում պահել և պահպանել իր տուն ու տեղն այնպէս, որ նրան ոչ մի բան չվտանգէ և ոչինչ չսպառնայ վկասել։

Եթէ նոյնիսկ, ներկայ սովորութիւնների մէջ, կինը միայն առ երեսոյթ է իր իրաւունքներով հաւասար ամուսնուն՝ տան ընդհանուր գործերը կարգադրելիս, այնուամենայնիւ նա անվիճելի իրաւունքներ ունի ոչ միայն տան ներքին կառավարութեան մէջ, այլ նաև այն ժամանակ, երբ իր աղջիկներից մէկի նշանելուն է խօսքը զերարերում։ Մի աղջիկ նշանելիս, մօր խօսքն ևս պէտք է առնել։ Սա էլ ցոյց է տալիս, ինչպէս ասել ենք, որ նշանելիս կամազուրկ աղջիկը պատկի միջոցով իրաւատէր է ցկեանս ընկերակցութեան—individua vitae consuetudo—և տանտիրունու պատւաւոր տեղը գրաւելու, և իրօք գրաւում էլ է։

Իւրաքանչիւր ընտանիքի մէջ, մենք զիտենք այն յարաբերութիւնը, որ կայ զոյգ ամուսինների մէջ։ մենք նաև տեսանք, որ բազմանդամ ընտանիքների մէջ նրան բաղկացնող ամուսնացած իւրաքանչիւր զոյգ կազմելով իր համար զատ ընտանիք մեծ ընտանիքի մէջ, նաև պարտաւորութիւններ ունի դէպի ամբողջը։ Սրանից ծագում է մի խոչըր իրաւաըմբանողութիւն, որ արիստական մասցած աղջիկը մէջ այնպէս զօրիդ և պարզ չէ շեշտաւած, ինչպէս

¹⁾ «Մարդու (որի կինը մեռել է) կրակը մարաւ, մուխը մարաւ, օճաղն անցաւ»։

հայկականի մէջ, Հայ ընտանիքը, ուր միքանի և աւելի պսակւած տղաներ կան, իրենից ներկայացնում է մի դաշնակցութիւն, Ըստանիքի բաղկացուցիչ իրաքանչիւր մասն ինքնավար է իր մէջ, ու ինքնավար այդ բաղկացուցիչ մասերն իրար են միանում հաւասար իրաւունքներով և հաւասար պարտաւորութիւններով դէպի միացած ամբողջը, Հայ իրաւունքի մէջ սա մի աչքի զարնող դիմ է. արժէր որ հայ իրաւունքի ընդհանուր պատկերը տալիս, ակնարկած իրաւաըմբռնողութիւնն աւելի մանրամասն հետազոտութեան ենթարկեր:

Հայ մարդն իր ազգանունը տալիս է և կնոջը, բայց անփեսան, դրա հակառակ, վերցնում է իր կնոջ հօր ազգանունն իր վրայ, և այդ այն պարզ պատճառով, որ ինքն իր որդոց միջոցով շարունակում է վերջիններիս մօրական պապի սերտնդը, Կինը պարտաւոր է հետեւ իր մարդուն և բնակուել այնտեղ, ուր նա է բնակում: Հայ օրէնսդիրը հոդ է տարել այն մասին, թէ Բնչ անել, եթէ կինը փախչի մարդուց և չուղենայ նրա հետ կինակցել: Այս առթիւ Շահապիվանի ժողովի վեցերորդ կանոնն ասում է, որ եթէ կինը մարդուն թողնի և փախչի, նրան բռնել և մարդուն յանձնել: Այս կանոնն յիշեցնում է հոռմէական իրաւունքի յայտնի Փօրմուլան, որ վերաբերում է մարդու իրաւունքին դէպի կինն ընդդէմ երրորդ անձնաւորութեան. այն է interdictum de uxore exhibenda et ducenda. ¹⁾ Թէ հայկական կանոնի և թէ հոռմէական այդ իրաւաըմբռնողութեան միտքն այն է, որ երրորդ անձնաւորութիւններ, զոցա թւում և կնոջ հայրն ու մայրը, կարող են արգելը լինել, որ մի կին իր ամուսնու հետ կինակցի, ու նրան չեն թողնի, որ իր ամուսնու մօտ զնայ: Կարող է պատահել, որ մարդու մօտից փախած կինը ծնողների կամ երրորդ անձնաւորութեանց կողմից արգելքների հանդիպի ամուսնու մօտ դառնալու: Շահապիվանի կանոնն ասում է, որ մարդուց հետացած կինը պէտք է մարդուն արւի, մարդու գէպի կինն ունեցած—համակենակցութեան—խախտած իրաւունքները վերականգնելու համար: Ասել է, մարդը ոչ միայն բողոքի իրաւունք ունի դէպի իր կինը, այլ որ նաև իրաւունք, իրենից հեռացած կնոջը բռնի կերպով իր հետ կինակցելու հարկադրելու:

Թէ հայ հին իրաւունքի տեսալներով և թէ սովորոյթի իրաւունքով, եթէ կինը ունի օրինական պատճառներ, որոնց հիմամբ իրաւունք ունի իր մարդուն չգառնալու, այն ժամանակ նա կա-

¹⁾ Dernburg, Pandekten III. s. 9. L. 2. D. de liberis exhibendis 43, 30, L. 11. C. de nuptiis 5, 4.

րող է մերժել մարդու այդ պահանջը։ Անկասկած, դատաւորին, որին ենթակայ էր այդպիսի խնդիրներ լուծելն, էր մասմաս քննելու այն պատճառները, որոնց հիման վրայ կինն իրաւատէր էր պնդել մարդուն շգամանալու իր մերժման վրայ։ Այդ պատճառները հիմնաւոր կարող էին լինել միայն այն ժամանակ, եթէ նոքա ամուսնալութեան հիմք կարող էին ժառանցիւ հակառակ դէպքում, ըստ կանոնի, որ պարտաւորական է և ներկայիս համար, կինը պէտք է զնայ իր մարդու հետ կենակցելու¹⁾։

Օրէնսդիրը նախատեսել է նաև այն դէպքը, երբ կնոջը թողնողը մարդն է. ըստ օրէնսդիր կամքի, մարդուց լքւած կինը, եթէ նա անմեղ է, իրաւունք ունի բաւարարութիւն պահանջելու։ Եաւապիվանի ժողովի չորրորդ և հինգերորդ կանոններով այդպիսի լքւած կնոջն ամուսինը պարտաւոր է նիւթական բաւարութիւն տալ, թէ ինքն իսպառ հրաժարում է նրա հետ կենակցել։

§ 17.

ԿՈՒՍՈՒԹԻՒՆ.

Հին արիների կեանքն ուսումնասիրողը նոցա ընտանեկան կազմակերպութեան ըմբռնողութիւնների մէջ կտեսնի մի խիստ աչքի զարնող հանգամանք, որ վերաբերում է կուսութեան պահպանութեանն և կոյս ամուսնանալուն։ Այս ըմբռնողութիւնը ցայտուն կերպով արտայայտած է նամանաւանդ հնդկական սրբազն գրքերի մէջ։ Հին արիները ծանր պարտաւորութիւններ էին զնում, նամանաւանդ ծնողների վրայ, հսկել իրենց աղջկներին, որ նոքա մինչի առաջաստ մտնելու գիշերը կոյս մնան ու այդ գիշերը փաստացի կերպով ապացուցանեն, որ իրօք պսակողները կոյս էլ եղել են։

Պէտք էր արօր դատելով ասել, որ հայերն էլ նոյն ըմբռնողութիւնը ոչ միայն ունին, այլ նաև միւս արիների նման հետեւմ ու շահագոգուած են, որ իրենց աղջկերքը կոյս մնան և պստի առաջին գիշերը կոյս զանւին։ Այս բոլորը, սակայն, միայն այն դէպքում, եթէ հայերի զուտ արիներ լինեն անվիճելի լինէր։ Հայ բանասէրներին յայտնի է, որ ակաղեմիկ Մարը վեր-

1) Սովորոյթի իրաւունքի համաձայն կինը նոյն իսկ անյարգելի պատճառով էլ, երբ նա իր մարդու հետ ապրել չի ուղղում, թողնում է իր ամուսնուն, առանց բանի տեղ դնելու հոգերը ատեանների պահանջն ու սաստը։

շին ժամանակներս, այսպէս ասած բերնից թողրած խօսքերով, իր աշխատութիւնների մէջ փորձեր է անում հայերի զուտ արիներ չլինելու ապացոյցներ բերելու. նրա այն աշխատութիւնը, որ այդ առթիւ լեզւաբանական մեծ նիւթեր պիտի հրապարակէ, դեռ լոյս չէ տեսել, իսկ այն, ինչ որ նա հրապարակաւ ասել է, հիմնաւծ է լեզւաբանական խախուտ և ենթադրական հողի վրայ: Խնչպէս ծաղրելով ասում են, լեզւաբանութիւնը կազմւած է 5 ձայնաւորից և 21 բաղաձայնից. բաղաձայներն ինքնին ոչինչ են առանց ձայնաւորի. իսկ վերջիններն էլ ոչինչ կամ շատ քիչ բան են ասում: Լեզւական նիւթից օգտել ուղեց հանգուցեալ Խալաթեանն, և տապալւեց չարչաշար և անդառնալի կերպով մի այլ բանասէրից—Մ. Աբեղեանից: Այս օրինակը ցայտուն կերպով ապացուցեց, որ մի ժողովրդի լեզուն որքմն խախուտ նիւթ է այդ ժողովրդի կուլտուրական կեանքի այս կամ այն խոշոր երեւոյթները բացատրելու և նրանց ծագումն ապացուցելու համար: Ուզում եմ ասել, որ մի ազգի ծագումը որոշելու համար լեզւաբանական նիւթը շատ ու շատ քիչ է, էլ չասեմ, որ նոյն իսկ կասկածելի է: Մի ժողովուրդ կարող է ամենակին իր ցեղի լեզով չխօսել, միանգամայն մոռանալով այն, բայց մինչոյն ժամանակ պահպանելով ցեղական այն գլխաւոր առանձնայատկութիւնները, որոնց գումարն արտայայտիչն է այդ ժողովրդի ծագման: Դրան ամենալաւ ապացոյց կարող է ծառայել հրէայ ժողովուրդը: Հրէան կորցնելով իր լեզուն զեռ միքանի տասնեակ զարեր առաջ. խօսելով արարերէն, թուրքերէն, սպաններէն, ֆրանսերէն, ջարդւած գերմաներէն և այլն, նա մնացել է նոյն հրէան: Այդ բազմազան լեզուներով խօսող հրէական հատւածները, նայեցէք, չըհասկանալով նոյն իսկ իրար, ունին նոյն գլխաւոր ցեղական յատկանիշները, որոնց գումարը նոցա մարդկային մեծ ընտանիքի ուրոյն մի անդամն է զարձնում: Հիմա նայեցէք լեզւական տըւեալներով ևթէ այդպիսի մի ժողովրդի ծագման մասին կասուցւածքներ անենք—իսկ այդպիսի ժողովրդներ շատ կան, ինչպիսի սխալների մէջ կընկնէինք:

Լեզուն որքան և մի խոշոր զործոն է մարդու հոգեկան կեանքի համար, այնուամենայնիւ նա մնում է իրը միջոց՝ հոգեկան երեսոյթներն արտայայտելու համար: Շատ չերկարենք. մի ժողովրդի ծագումն ու կուլտուրայի ընոյթը որոշելու համար, պէտք է վերցնել այդ ժողովուրդն հոգեկան իր ամրող աշխարհով, նրա կեանքի արտայայտիչ բոլոր հիմնական գծերով: Հաշւելով դատողութեան այս նպանակը ճիշտ և բանաւոր, կարող ենք հայ լեզւի մէջ եղած—ևթէ միայն դոքա ապացուցին—սեմիտական խոշոր

նոյն իսկ տարրերը զուտ փոխառութիւններ հաշւել, առանց որ այդ տարրերը ծագման կամ խառնուրդի հանգամանքով բացատրենք: Եւ այդ նաև այն հիմնական պատճառով, որ հայ ժողովրդի արիական ծագումն ունենալու փաստն ապացուցւում է այլ խիստ շեշտուող բնոյթագծերով: Այդպիսի բնոյթագծերից մէկն էլ աղջկայ կուսութիւնը մինչի առաջասար մտնելու ժամը պահելու և պահպանելու ձգտումն է, ու այն յարգն ու արժէքը, որ հայը տածում է գէպի կուսութիւնը: Կուսութեան խնդրի հետազոտութիւնն այստեղ խիստ կարենոր եմ հաշւում նաև այն պատճառով, որ օտար ուսումնաբիրողներ, ինչպէս և նոցա ասածները միայն ընդօրինակող հայ հետաքրքրուղներ, պաշտպանում են այն կարծիքը, որ հայերի մօտ մի ժամանակ ծաղկած է եղել Անահիտան պաշտամունքը: Իսկ մի ժողովաւրդ, որ Անահիտան պաշտամունքին է հետեւել, չի կարող կուսութեան յարգն և ճանաչել և ճանաչելու գիտացութեանը հասած լինել: Հայերի վերաբերամբ այդ բանը ասկայն, մի ծանր թիւրիմացութեան արդիւնք է Նախքան այս խնդրին դառնալին անենք մի քանի խորհրդածութիւններ կուսութիւնը պահպանելու ըմբռնողութեան ծագման առհասարակ, ու ցոյց տանք թէ՝ լինչ զրդիչներ հարկադրեցին հին արիներին հոգ տանել աղջկայ կուսութիւնը պահելու և պահպանելու մասին մի կողմից և կուսութեան յարգը ճանաչելու ըմբռնութեանը համեմունքում, միւս կողմից:

Ընթերցողն արդէն զիտէ, որ տողերիս զրողն այն ենթադրութեան է, որ ամուսնութեան, այսինքն մի կնոջ մի մարդու պատկանելու ըմբռնողութեան հիմը գրել է առաջին այն յանդուն մարդը, որ կին է յափշտակել իր համար: Այն հանգամանքը, որ կին յափշտակելը կապւած է եղել միշտ վտանգների հետ, շատ բնական է, որ յափշտակողն այն գիտակցութեան դար, թէ դժւար, շատ անզամ կեանքի զնով ձեռք բերած կինը պիտի միայն իրեն պատկանի: Այս գիտակցութիւնն արդէն կապում է առեւնզման միջոցով ձեռք բերած կնոջը բնակութեան այն վայրի հետ, որ իրեն յափշտակողն ունի: այս հանգամանքով արդէն առւած է մի դոյց մարդ և կնոջ (կանանց թիւը կարող էր նաև շատ լինել) համակենակցութիւնն իրը ընկերական (սօցիալական) մի երեսոյթ: Այս բոլորից մինչի կին առած մի աղջկանից կոյս լինել պահանձնելը գեռ շատ հեռու է: Բայց մեր վերենումն ասածների մէջ մի կարենոր կէտ կայ, որի վրայ և հրաւիրում ենք ընթերցողի ուշադրութիւնը: Դա նախնական մարդու այն գիտակցութիւնն է, թէ իր ձեռք բերած կինը միայն իրեն պիտի պատկանի:

Մարդը որքան և կուլտուրայի ստորին աստիճանի վրայ

կանգնած լինէր, այնուամենայնիւ չէր կարող չնկատել, որ կանաց հետ սեռական յարաբերութիւն ունենալիս, հանդիպում է մի աշքի ընկնող երևոյթիւ Այդ երևոյթը նրան կրերէր այն ըմբռնողութեանը, որ, որևէ է մարդու հետ սեռական յարաբերութիւն չունեցած մի կին (աղջիկ) տարբերութիւն է այնպիսիներից, որոնք արդէն այդպիսի յարաբերութիւն ունեցել են: Երբ նա կհամնէր այդ ըմբռնողութեանն, հապա նա այդ տարբերութիւնը կհաշւէր մի նշան: մի նշան, որ հէնց առաջին սեռական յարաբերութեան միջոցով քանդուում էր: Այսուհետեւ բոլոր նորա, որ այդ նշանն ունեին կամ ունենալու էին, կոչւեցին կոյս: Նա, ով որ մի այդպիսին էր կին վերցնում, նա զիտէր, որ իր վերցրածն այդ նշանը պիտի ունենայ, այլ խօսքով, իր վերցրածն ուրիշ կողմից դեռ ձեռք տած չէ: Նա շուտով կգիտակցէր, որ այդ ժճեռք տուած շլինելլը մի առաւելութիւն է մարդ դեռ չգիտցած կնոջ (կոյս աղջկայ) համար և միենոյն ժամանակ մի նպաստաւոր հանգամանք իր համար: Այս բոլորի պարզ եզրակացութիւնն այն է, որ հին մարդու համար սկսէր ձգտելու մի պայման դառնալ և յետոյ արդէն մի խիստ պահանջ՝ ձեռք բերել մի կին, որն այդ ցանկալի նշանը ոչ միայն ենթադրաբար, այլ նաև իրաք ունենար:

Այսպէս ուրեմն, երբ տղամարդն առևանգման միջոցով միայն իրեն պատկանող կինն ունենալու գիտակցութեանն հասաւ, նրա համար սկսեց արժէքի վերածւել նրա նաև այն ըմբռնողութիւնը, թէ իր ձեռք բերած կինը պէտք է կուսութեան նշանն ունենայր Այսուհետեւ նա իր ձեռք բերած կնոջ մէջ պէտք է որոնէր այդ նշանը: Սա արդէն այդ նշանի՝ կուսութեան գնահատումն էր: Ասել է, քանի դեռ ամուսնութիւնը կուլտուրական կենացի մէջ մի երևոյթ չէր դառնել, չէր էլ կարող կուսութեան ըմբռնողութիւնն ու նրա արժէքի վերածւելը մի կոնկրետ հասկացողութիւն գառնալ: Կուլտուրայի աւելի բարձր աստիճանումն արդէն սկսեցին մտածել կուսութիւնը պահպանելու և պաշտպանելու մասին, և այլն հոգացողութիւններ, որոնք բոլոր գարերի արիներին էլ խիստ զբաղեցրել են:

Պաֆեսսօր կոլերն այն կարծիքի է, թէ վաղաժամ նշաղրութիւնն է, որ առաջ է բերել կուսութեան գնահատումը¹⁾: Մեր

¹⁾ Կոլերն ասում է, յայտնի է, որ կնոջ վրայ մարդու ամուսնական իշխանութեան ըմբռնողութեան և վաղաժամ նշանազրութեան հետ միասին այն հասկացողութիւնն է հասունանում, որ կինը միմիայն մարդու համար է սահմանւած, և այսպէս թէ

վերի տողերն արդէն ցոյց տւին, որ մենք այդ կարծիքին ոչ միայն հակառակ ենք, այլ նաև տալիս ենք կուսութեան գնահատման ծագմանն այլ բացատրութիւն և հիմնաւորութիւն Անցնենք մեր մաքերի շարայարութեանն ու պարզենք նշանադրութեան ծագութիւնը ու նրա գերը կուսութեան գնահատման և պահպանելու խնդրում:

Բոլոր արիական աղջերի մօտ կուսութիւնը ամուսնութեան դաշնագրի հիմնակէտերից մէկն է. մարդու գնացած աղջիկը պէտք է առագաստ մտնի իր կոյս Առաջին զիշերն եթէ հարսը կոյս դուրս չեկաւ, դա ինքնին պայմանագանցութիւն է, որի հետեանքը ամուսնական դաշնի քակտութիւնը պահպանելու հոգացողութիւնը, որ ընկնում էր ծնողաց վրայ, միւս կողմից էլ առաջ է գալիս հարսնացուն նախօրօք որոշելու ըմբռնողութիւնն ու սովորութիւնը: Սրանով էր ձգտում հին մարդն-իր այն մեծ փափազն իրագործւած տեսնել: Քանի դեռ առևանգման ձեռով ամուսնութիւնը տիրապետողն էր, առևանգողն ինքն էր որոշում իր ապագայ կողակցին, և առևանգում էր կոյս աղջիկներ, այսինքն կանայք, որոնք մարդ չունին ու չեն էլ ունեցել: Այս գէպքում գործում էր այն միտրը, թէ աղջիկը կոյս է լինելու: Այդպէս չէ սակայն գնման միջոցով ամուսնութեան ժամանակի Մինչ առաջին գէպքում կողմերի փոխագարձ համաձայնութեան մասին խօսք լինել չի կարող, երկրորդ գէպքում աղջկայ և աղայի կողմերն իրար հետ բանակցում են ամուսնութեան դաշնագրի նկատմամբ և փոխադարձ համաձայնութեան գալիս պայմանագրի օրեկտի վերաբերմամբ: Առ երբ դաշնագիր կողմերի մէջ պայմանը կնքւած է, պայմանագրի օրեկտը նկատուում է նշանակւած և սահմանւած դաշնագիր միւս կողմի համար: Դաշնագիր այդ կողմը զրանով ապահովում է իր համար օրեկտ-աղջիկը, դրա հետ նաև նրա կուսութիւնը: Այդ դաշնը նրան ասում է, որ իր վերցրած աղջիկը պիտի անարատ մնայ, նա ձեռք տւած չպիտի լինի, ուստի և նրա կուսութիւնը պիտի պահեի և կոյսի ծնողների կողմից պահպան: Ի միայն իր-դաշնագրը կողմի համար:

Հին արին, սակայն, սրանով չբաւականացաւ, նա եկաւ այն մաքին, որ իր ապագայ կինն իր համար կոյս պահելու համար, պէտք է վաղօրօք որոշել: Սրանից ծագեց փոքրահասակների նշանագրութիւնը, որ այնքան տարածւած է եղել բոլոր արիների

որ կուսութեան գնահատութիւնը արժանիք պիտի նկատել, հապառիքին մանկանց նշանադրութիւնն է այդ առաջաղիմութիւնը ժամանակակից դարձրել: Z. f. vergē, R. VII S. 341.

մօտ, ու դեռ շարունակում է գործել մեր-հայերի մէջ։ Մեղանում դեռ այժմ էլ սովորական է երկար տարիներ նշանւած մնալ։ Վաղաժամ նշանելն այն երաշխիքն էր տալիս, ուրեմն, որ իրաապագայ ամուսնու-համար ընտրած աղջկայ կուսութիւնն ու նոյնինցն աղջիկը կպահւին։ Իր հարսնացուի կանխապէս որոշելն հայ ժողովուրդը խիստ առարկայական ձևով է բնորդչում։ Աղջիկ մարդու տալու առաջին գործողութեանը նա անւանում է նշանել, իսկ երբ նշանն արդէն տրւած է, զա կոչում է նշանաղբել, որ նոյն նշանել մտքով է գործածում։ Նշանելու կամ նշանաղբելու ակտերն իրենց անւանումով մի բացատրութիւն ունին, դա այն է, որ կին ուզողն իր ուզած աղջկայ վրայ, երբ արդէն նրա-ջկայ—տալու պայմանը կապւել է, նշան է զնում։ Նշան դրւած աղջիկը պատկանում է նրան, որ նշանն է դրել։ Ամուսնութեան սկզբնական այդ ակտը ոչ մի լեզուով այդպէս պատկերաւոր և առարկայական ձևով չի անւանում։ Մենք միանգամ արդէն ասել ենք, որ հայերի նշան և նշանաղբութիւն խօսքերի մէջ պահւել է ամուսնութեան դաշնի իրը մի առետրական զործողութիւն լինելու ամենալաւ ընորոշումը, մի հանգամանք, որ չէր գտնիլ արիական միւս ազգերի նշանաղբութիւն նշանակող բառերի մէջ։ Ինչ որ է, էականն այն է, որ հայը մի աղջկայ վրայ նշան դնելով, նրան իր համար է վերապահում ու իր համար նախասահմանում։ Աղջկայ վրայ նշան զնելը նաև յայտարար նշանակութիւն ունի երրորդ անձնաւորութիւնների համար։ Նշանը պէտք է նրանց ցոյց տայ, որ քանի նա մի աղջկայ վրայ է, այդ աղջիկն ուզել չի կարելի։

Այս բոլորից, թէ թէ պարզւեց, որ ոչ թէ նշանաղբութիւնը պատճենակութիւն կուսութեան արժէքի գիտակցութեան ծագումը, այլ ընդհակառակը, կանխաժամ նշանաղբութիւնն ու առհասարակ մի աղջկայ վրայ նշան զնելը մի միջոց էր աղջկայ կուսութիւնը մի որոշ-այդ աղջիկն ուզող—անձնաւորութեան համար պահելու և պահանելու համար։ Ասել է, կուսութեան յարզի ծագումը շատ առաջ էր, քան նշանաղբութիւնը։ Մի արժէք, որի գիտակցութիւնն եթէ հին մարդը չունէր, չէր էլ կարող նրա պահպահման մասին միջոցներ որոնել և ընտրել, Ինչպէս արդէն ասել ենք, երբ կուսութիւնը մի աղջկայ համար իրը առաւելութիւն նկատւեց, ու այդ առաւելութիւնն արժէքի վերածւեց, այն ժամանակ միայն մարդու որոնող միտքն այդ արժէքը պահելու միջոցները գտաւ ու ապա գործադրեց։

Այդ հոգացողութիւններն երկու տեսակի են, ինչպէս ընթերցողն արդէն կուահած կլինի։ Մէկի մասին արդէն խօսեցինք.

դա աղջիկ կին ուզողի ձեռք առած միջոցներն են, որ իր ապագայ կինը կոյս լինի և իր համար կոյս պահեի մինչի առագաստ մտնելը, կուսութեան նշանի արժէքի վերածւելն առաջ բերեց շատ բնական կերպով այդ նշանի գոյութեան պահանջը մի աղջը-կանից՝ որ մարդու էր գնում: Աղջիկն իրը վաճառման օրեկտ պէտք է ունենար այդ նշանը. սրանից ծագեց այն հոգացողութիւնը, որ աղջկայ տէրը՝ ծնողները՝ բնականարար ունենալու էր իր աղջկայ մօտ կուսութեան նշանի անարատ մնալու. նկատմամբ, Այդ հոգացողութիւնը հարկադրում էր նրան հսկել և պահանձնել իր աղջկան, իսկապէս նրա կուսութիւնը Բոլոր հին արիների մօտ էր, այդ պարտականութեան մէջ թերացած ծնողն ենթարկում էր պատասխանատութեան ու պատժի: Պատասխանատութեան երկիրըն այնքան մեծ է եղել, ու դրա հետեանքով հսկողութիւնն այնքան խիստ ու մեծ հոգացողութիւն պատճառող որ աղջկայ վրայ այդ հսկողութիւնը տարածել ու տեղի է մինչի առագաստի շէմքն անցնելը, այսինքն աղջկան մինչի աղջին յանձնելու մօմենտը՝ առաջին գիշերւայ համար: Այդ ձեի հսկողութեամբ աղջկայ ծնողն ուզում է երաշխիքն ունենալ, որ իր աղջիկն իր հսկողութեան տակ առագաստն է ոսք կոխել անազարտ Արիական ազգերից հայերի մօտ ամենից աւելի խիստ և որոշ կերպով են պահպանւել ծնողի այգսիքն հոգացողութեան ապացոյցները, Խօսքս հարսնքոյր եւ հարսներքայր ըմբռնողութիւններին է վերաբերում, որ ըստ Հութեան ընդհանուր արիական լինելով, ունի հայկական ցեղական գունաւորումն և կնիք: Այս ըմբռնողութիւնն էր, հարսնացօքէն ասենք, հայ իրաւոնքի և հայ ժողովրդի արիական ժագումն ունենալու ապացոյցներից մէկն է:

Հին հսկիկն ու արիական միւս ազգերը հսկում էին, որ իրենց աղջիկը կուսութիւնը պահէ մինչև առագաստի շէմքն անցնելը: Խոկ արիացի հայը, հարսնասի հէնց սկզբի մոմենտից, այսինքն հարսի տանը նրա ձեռքը փեսային յանձնելու վայրկեանից, տալիս էր իր տանից կամ իր միրճաւոր բարեկամների շըշանից երկու հոգի, որ իր աղջկան ուզելցեն ոչ միայն մինչի փեսի տանը, այլ նաև նրա մօտ մնան մինչէ հարսնիքի վերջն ու հարսին առաջին գիշերւայ համար փեսային յանձնելու մոմենտը: Այդ ուզեկից—հսկողներից մէկը կոչւում է հարսնեղբայր, իսկ միւսը հարսնքոյր: Հարսնեղբայրը կարող է մի պատանի էլ լինել—ըստ գոյութիւն ունեցող այժմեայ սովորութեան—իսկ հարսնքոյրը լինում է մի ատրեց կին: Հարսնեղբայրը գերը վերջանում է հարսի առագաստ մանելով, իսկ հարսնքբոջ գերն իսկապէս վերջանում է առաջին գիշերւայ ելքով: Հարսնքոյրն իր գե-

բը վերջացած է համարում, երբ ապացուցւում է, որ հարսը կոյս է եղել, Բոլոր արիների մօտ էլ, ինչպէս ասացինք, մեծ արժէք է տրում այն բանին, որ աղջիկն առաջին գիշերն ապացոյցներ տայ իր կոյս լինելուն։ Շատ արիների մօտ, առանձնապէս տան կանայք հսկում են հարսնքրոջ հետ միասին, որ հարսի կուտութեան ապացոյցը տեսնեն հչնց այդ գիշերը Հարսնքրոյրը վկան և մինոյն ժամանակ հսկողն է, որ որեւէ խարդախութիւն տեղի չունենայ, ուստի և շատ տեղերում այդ նրա պարտականութիւնն է աղջկայ կուտութիւնն խախտւելու նշանները զուրս բերել նորապակների ննջարանից և ցոյց տալ փեսի տանեցոց։ Այդ ապացուցանշաններն են նոր զոյգի անկողնի արնոտ սաւանը։ կամ մի այլ շորի կտոր, Առաջին գիշերւայ հետ կապւած այդ սովորութիւնը տարբեր գաւառների մէջ տարբեր է կիրաւում մեզանում։ Անկախ այն բանից, փեսի տանեցիք աղջկայ կուտութեան ապացոյցը պիտի տեսնեն, կան տեղեր ուր, օրինակ արնոտ սաւանն ուղարկում են աղջկայ ծնողներին ի յանդորրութիւն։ Փեսի և հարսի ծնողներն այդ ապացոյցն ունենալուն անհամբեր սպասում են նաև այն պատճառվ, որ գրա հետ է կապւած ամուսնութեան պայմանագրի անխախտ մնալ չմնալը։ Հայերի մօտ զոյւթիւն ունեցող հին սովորութեան համաձայն, այդ պայմանը քանզւում և աղջիկն ետ է ուղարկուում իր ծնողներին, եթէ նա առաջին գիշերը կոյս չէ զուրս եկել։ Այդպէս է եղել և արիական միւս հին ազգերի մօտ։ Ուստի և շատ ընական է, որ գաշնազիր կողմները մեծ գոհունակութեամբ առնէին հարսի կոյս զուրս գալու լուրը։

«Կոյս» բառի զոյւթիւնն հայ հին լեզվի մէջ ինքնին ապացոյց է, որ հայ ժողովուրդն ունի այդ ըմբռնողութիւնը, մի ըմբռնողութիւն, որ նա արիական մայր ընտանիքից բաժանւելիս տարել է իր հետ իրը ընդհանուր արիական ցեղական սօցեալիրաւական մի ըմբռնողութիւն։

Հայ հին պատմութիւնից Ագաթանգեղոսի տեսալները թողնելով ներկայ պրակի երկրորդ մասի մէջ առաջ բերելու, այստեղ տանք պատմական մի քանի այլ տւեալներ։

ա. «Բայց կոյս մի գեղեցկադիտակ՝ ՚ի քերցն Աբաւաւազդայ, զողացեալ Տաճատայ ուրումն... փախուցեալ ի կեսարացոց քաղաքին ապրեցուցանէր, ամուսնաւորեալ ընդ ինքեան»։ Մ. Խոր. Ա. 78.

բ. «Նոյնպէս էր և ուն նորա Խոսրովազուխա, կուսան հա-

1. Այս առթիւ համեմատել I. Kohler. Zeit. f. verg. Rechtsiw VI. Die Ehe ohne und mit Mundium, կրիս 338.

մեստ որպէս զօրինաւոր ոք և ոչ ամենեին անել անդուռն բերան նման այլ կանանց։ Անդ. II. 82.

Ը. «Եկեալ Տրդատայ յաշխարհն, առաքէ զՄմբատ ասպետ, դնայր Բագարատայ՝ ածել զկոյսն Աշխէն՝ դուստը Աշխաղաբայ՝ խր ի կուռւթիւն, որ ոչ ինչ նուազ էր կոյսն արքային հասակի»։ Անդ. II. 83.

Ճ. Փաւստոս Բիւզանդի հետեւեալ վկայութիւնը շատ կարեւոր պատմական տւեալ է, որը չենք քաշւում այստեղ կրկնակի կերպով առաջ բերել Աշտիշատի ժողովի որոշումները տալիս, նա առաջ է բերում նաև հետեւեալը։—«Եւ զի լիցին յամումնութեան օրինաւորք, մի ստել և մի դաւ բերել իւրեանց ամուսնութիւն ընկարեալ կողմանց։ IV. 4.

Փաւստոփի այս տւեալից հետեւեալ եզրակացութիւնը կարեւի է գուրս բերել—Որ ամուսնական դաշն կրող կողմերն իրարից ոչինչ չպիտի ծածկեն, ու իրար չպիտի խարեն։ Այս խարեն ու ծածկելը կարող է միայն դաշնագրութեան օրեկտին վերաբերել, այսինքն աղջկան, նրա բաժիններին և այլն։ Մենք գիտենք, որ աղջկայ կոյս լինելու հանգամանքն ամուսնութեան դաշնի գլխաւորագոյն ենթագրութիւններից մէկն է։ Կթէ դաշնապիր կողմերից մէկը զիտաւորեալ խարզախ դաշն կապէ—ոչ կոյսը կոյսի տեղ մարդու տայ, արատաւորն անարատի, և այլն, հապա ուրեմն նա դաշնը կնքելիս ստել, խարել է, դաւ է սարքել դաշնագիր միւս կողմի գէմ, որ այս զէպքում միանգամայն միամիտ է, ու հարկադրւած է իրեն հետ դաշն կապող հակառակ կողմին հաւատաւու Եթէ այստեղ ի նկատի ունենանք, որ հնգկական իրաւունքի հին ազրիւններն էլ նոյնպիսի պահանջներ են զնում դաշնագիր կողմերի առաջ, առաջ, առանձնապէս աղջիկ տւող կողմի առաջ, հապա ուրեմն, մեզ համար միանգամայն պարզ կլինի, թէ Փաւստոսը որքան հարազատ կերպով է տալիս արիական մի ազգի այդ իրաւացմբնոնդութիւնը։ Զմոռանանք առանձնապէս շեշտել, որ Փաւստոփի տւածը մի բեկորն է հայ օրէնսդրական մի ժողովի որոշումներից, —իսկ այդ ժողովը պատմական մի իրողութիւն է։

Մինչն այժմ մեր ասածներից զիտենք, որ ամուսնական դաշնի ենթագրութիւնները պարտաւորական են դաշնագիր կողմերի համար, ու նրա իւրաքանչիւր կէտի խախտումը կարող է ամբողջ դաշնագրի քակումն առաջ բերել։ Արդ, Կթէ աղջկայ հայրը ծածկել է աղջկայ արատները, որոնց թւում նաև նրա կոյս չլինելը, հապա ուրեմն նա—աղջկայ հայրն—իրը խարող և դաւող կողմն, պիտի նրա հետեւանքները քաշէ։ Աշտիշատի ժո-

զովն ահա, ի նկատի ունենալով այդպիսի դէպքերն, օրինադրում է հեռու կենալ նմանօրինակ վարմունքցը: Ըստ այդմ աղջկայ հայրը պարտաւորւում է դաշնադիր միւս կողմից ծածկել իր աղջկայ պակասութիւնները, այն պակասութիւնները, որոնք առ մուսնական դաշնագրի գլխաւոր ենթադրութիւններին հակառակ և նոցա ժխտող են. դոցա մէջ, գլխաւոր տեղը բռնում է, ինչպէս մենք տեսանք, կուսութիւնը:

Ե. Այս ինդրի առթիւ մեծ կարևորութիւն են ստանում աղպային մի այլ ժողովի դրած իրաւանորմերը, թող ընթերցողը գիտենայ, որ խօսքը վերաբերում է Շահապիվանի (447 թ.) ժողովին, մի ժողովի, որ հայ ժողովրդի մեզ յայտնի պատմական անցեալի ամենանշանաւոր օրէնսդրական ժողովն է եղել: Այդ ժողովի երրորդ և եօթներորդ կանոնների մէջ հետևեալն ենք գրանում:—

Ա. «Ապա եթէ ոք յառաջ քան զամուսնութիւնն ի պոռնկութեան գտաւ, կամ ընդ օտարի և կամ որ նմա խօսեցեալն էր. ընդ անարգանօքն տուգան տայցէ զինչ և արկցին հայր և մայր կուսին... և եթէ ի պսակն եկեսցեն մի իրքն կուսանաց պսակ օրհնեսցեն, այլ իրքն երկակին տեսանագրեսցեն լոկ. ապա եթէ աղջկանն կամօք է պոռնկութիւնն, տուգանել հայր և մայր աղջկանն մի շինեսցեն, այլ 100 դրամ այրն և 50 դրամ աղջիկն տուգան տայցեն յեկեղեցին և աղքատս բաշխեսցին: Ապա եթէ մինն սուրբ կուսան և մինն պոռնկեալ, կուսանին իրքն կուսանի օրհնեսցեն և պոռնկելոյն որպէս երկակի ուռ տեսանագրել...» Գ. կանոն:

Բ. «Ոյք առևանկ առնիցեն, կալցին զկինն և անդրէն տայցեն ցհայր և ցմայր իւր, և տուգան տացին փոխանակ անարգանացըն... ապա եթէ սուտ փեսայն ընդ աղջկան որոննիկեցաւ տռանց պսակ դնելոյ, յեկեղեցի տուգան կալցին... պսակ մի օրհնեսցի, այլ իրքն զերկակին ուռ տեսանագրեալ զիցի ի զրուխ. ապա եթէ կուսան կացեալք են ըստ օրինին պսակ օրհնեսցեն, եթէ ազատ և եթէ շինական կանոն այդ կացցէ: է. կանոն:

Հարկաւոր է ասել, որ ծ-րդ դարս առաջին կիսում զրւած այս կանոնների մէջ խօսում են հայ ժողովրդի մէջ դարերով գործած իրաւաըմբռնողութիւնները: Խօքա իրաւական հասկացողութիւններ են, որոնք չէին կարող մի անգամից ծնունդ առնել ու զրաւոր օրէնքի ձև ստանալ: Նոցա համար, որոնք հայ ժողովրդի անցեալում Անահիտի պաշտամունքի գոյութիւնն իրք փաստ են ընդունում, թէ նախընթաց նիւթը, բայց նամանաւանդ Աշ-

տիշտաի ու յատկապէս Շահապիվանի ժողովի յիշածա կանոնների տևեանները խիստ խրառական կարող են լինել:

Չերկնենք այս, ինչ որ մի այլ տեղ ասել ենք, այլ տանք Շահապիվանի այդ կանոնների տրամադրութիւններն ամփոփ կերպով՝ իր եղբակացութիւն.—1. Եթէ աղջիկը պսակից առաջ սեսական յարարերութիւն է ունեցել ուրիշի կամ իր փեսացուի հետ, նա չի կարող իր կոյս պսակւել, այլ իրը այրի. 2. Եթէ աղջիկը կոյս չէ մնացել ծնողների կողմից հսկողութեան պակասի կամ անփութութեան պատճառով, հապա տուգանւում են ծնողները. եթէ աղջիկը կամովի է իր կուսութեան խախտման պատճառ գարձել, ծնողներն անպարս են, տուգանւելու են աղջիկն ու փեսան. 3. Առեանգւած աղջիկն եթէ կոյս է մնացել, պսակւում է կոյսի պէս, եթէ ոչ, երկակի (այրիի) պէս. 4. Կոյս պսակւունների և այրինների ու կուսութիւնը կորցրած աղջիկների պսակւները տարբեր են: Հնդկական իրաւունքի աղրիւններն չէ նոյնն են տումբ: Մանուք օրէնքով՝ «պսակի օրնութեան կարգը միայն կոյսների համար է սահմանաւծ, և մարդկանց մէջ երբէք այնպիսինների վրայ չպէտք է ասւին, որոնք իրենց կուսութիւնը կորցրել են, որովհետև այդպիսինները սրբազան արարողութիւնից այդ պատճառով մերժւած են»: Խառ 226.

Մանուք օրէնքի և Շահապիվանի օրէնքի նմանողութիւնը խիստ աշխի զարնող է. և այդ շատ հասկանալի պատճառով.—երկու օրէնսդիրներն էլ զեկավարելու են միենոյն մտածելակերպով, երկուսն էլ նման իրաւաբմբունողութիւնները քաղել են միենոյն մայր աղրիւրից: Շատ շահնկան կլինէր, եթէ հայ իրաւունքի նորմերը համեմատութեան գրւէին հնդկական իրաւունքի իրաւաբմբունողութիւնների հետ. զա երկու իրաւունքների խոշոր նմանողութիւններ հանդէս կրերէր: Այս աշխատառութեան մէջ, ինչպէս ընթերցողը կահանի, հնարաւոր եղած չափով ձգտել ենք համեմատութիւններն անել և եթէ աւելին չենք արել՝ զրա պատճառը պէտք է փնտանել ներկայ գործի ծաւալի մէջ. Զը որ մենք այստեղ ընդհանուր խնդիրներ շօշափելուց պէտք էր որ խուսափէինք:

Անահտի պաշտամունքը.

Նախքան թէ կանցնէի աղրիւնների տւած նիւթին, հարկ եմ համարում մի փոքրիկ շեղումն անել, մի քանի բացատրութիւններ տալ Անահտի պաշտամունքի մասին և այն բանի մա-

սին. թէ լոյն հիմամբ այդ պաշտաման հայերի մօտ գործելու մասին հաւաստութիւնը են լինում:

Նախ ասենք, որ թէ Ավեստայի (Avesta) և թէ այլ տւեալ-ներով, Արդիվի-Անահիտը զուտ արիական աստւած է, որ յետոյ սեմիտաները փոխ են առել, և տւել մի քանի, արիական Անահիտին միանդամայն խորթ, յատկութիւնները: Այդ բանն ակներև կերպով շեշտում է նոյն Ավեստայի մէջ: Եւրոպացի միքանի ուսումնասիրողներ հիմք ունենալով Ստրաբոնի մօտ եղած մի յայտնութիւն, հաւաստում են, որ Հայաստանում մի ժամանակ ծաղկած պիտի լինի Անահիտի պաշտամունքը՝ պատմագրի այդ տւեալն ամբողջովին հայերին վերագրելով: Նոյն, օտար այդ գիտնականներից անգիր արած, կրկնում են և հայ հետաքրքրուդներ, առանց ստուգութեան ենթարկելու ձեռքի տակ եղած ահազին նիւթը: Այս նիւթի մասին հայ զրականութեան հատ ու կտորների մէջ չանդիպեցինք և ոչ մի ինքնուրոյնութեան: Մի այլ տեղի թողնելով մանրամասն ուսումնասիրել Անահիտի պաշտաման Հայաստանում գործած լինելու առասպելն իր հայ ժողովրդի պաշտամունք, այստեղ ասենք, որ Ստրաբոնի տւեալների այդ մասը խիստ վերագանութեամբ պէտք է ընդունել և ոչ առանց նրա ընազրի հետազոտութեան: Ստրաբոնի ընազրի մանրազնին ուսումնասիրութիւնից յետոյ (մեր ձեռքն են եղել զերմաններէն երկու թարգմանութիւն) մեզ թւում է թէ Անահիտի պաշտաման հայերի մօտ գոյութիւն ունենալու ենթադրութիւնը Ստրաբոնի ընազրի անձիշտ հասկանալուն պէտք է վերագրել: Այսպիսի մի յայտնումից յետոյ անհրաժեշտ է, որ Ստրաբոնի ընազրը լուրջ քննազատութեան ենթարկեի: Ընթերցողի պահանջը չափազանց կազմւէի, թէ յայտնւէր, որ ընազրի ակնարկածն քննազատութիւնը կամ նրա մերձաւոր տւեալներն այստեղ առաջ բերւելն անհրաժեշտ էր: Առանց այն էլ, կուսութեան մասին զլուխն այս աշխատութեան մէջ կարկատանի ձեռվ է ներս բերւած, ու այդ արել ենք մի ընդհանուր ըմբռնողութիւն տալու ձգումամբ, ու թւում է թէ որոշ նպատակի հասել ենք դրանով: Մեր միտքն էր հին, քարացած, ու թւի թէ ոչ մի առարկութիւն չվերցնող մի հաւաստումի դէմ, ինչպէս և հեղինակութեան դէմ վեր կենալ, ու նրան խոցող հարւածներ տալ: Այդ բանն արինք, ու թող այժմ վերկենան պաշտպանեն հին շարլօնական պնդումները:

Մեր ենթադրութեան ապացոյցների շարքը շարունակելով, այստեղ առաջ կրերենք ազգային և օտար ազգիւրներից տւեալներ: Ազգային Ազաթանգեղուն է, օտարն Ավեստան: Ազաթան-

գեղոսը քրիստոնէութեան ժամանակ և քրիստոնէի գրած է. այս բանը չպէտք է մռանալ, ու իրը այդպիսին, նրա տւեալներն ստանում են առանձին կարևորութիւն, նա այնպիսի քնքութեամբ, այնպիսի ածականներով է խօսում ու գովաբանում Անպհիտ նիթարնուսուկան առաւածունու մասին, որ կարծես այդ նկարագրողն ինքը մի ճերմեռանդ հեթանոս է, պատրաստ ամեն բոլոր երկիր խոնարհելու Անահտի առաջ ամենամեծ երկիրզածութեամբ։ Բայց կասկածից զուրս է, որ Ագոթանգեղոսի գրողը հաւատացող քրիստոնեայ է եղել, Այս բոլորը մի բան է ապացուցանում, Ազաթանգեղոսի հեղինակը, միանգամայն օրեկտիւ կերպով տալիս է Անահտի մասին այն, ինչ որ կար և պահւել էր հայ ժողովրդի մէջ այդ զիցունու մասին, Պատմագրի տւած անունները, յատկութիւնները, և այլն, Անահտի մասին ժողովրդի բերնում շրջող, և այն ոչ առանց հիացմունքի և խորին սիրոյ ու յարգանքի, ըմբանզողութիւններն են, Խակ այդ բոլոր անւանումների մէջ չեք գտնիլ և մի հեռաւոր ակնարկ սեմիտական Անահտի բնոյթի նա, պատմական տւեալների մէջ մնում է մաքուր, անարատ, բարձր և խիստ բարոյական, ճիշտ այնպէս ինչպէս այդ տեսնում ենք Ավետարյայի մէջ՝ Արդիվիր—Անահտին։ Ճիշտ նոյն պատկերը, Ես այսպէս եմ հասկացել հայկական Անահտին, ու այդպէս էլ պատկերացրել եմ արիական Անահտին։ անարատ, մաքուր, զգաստ, Մի քրիստոնեայ զրոյ (ուշաղրութիւն), եթէ իր ժամանակում, կամ այն ժամանակում, երբ գէպքերն են պատահել, այդպիսի հասկացողութիւններ չշրջէին Անահտի մասին հայերի մօտ, պէտք էր որ կուպացտական մի աստւածունու մասին գովասանական և խորին յարգանքի խօսքեր չշռայէր, և այդ այն ժամանակ, երբ նոյն այդ աստւածունու մեհեանն ու պաշտամունքն էին հիմնայատակ անում։ Էլ չասենք, որ այդ պատմագրը տեղը բաց չի թողնում արհամարհներով խօսելու կուպացտութեան վրայ, ու կուռքերին երկրպագիլն անւանում է ւանարժանութեան գործ։ Անցնինք նիւթերին։ —

Ազաթանգեղոս.

Ե. 48. Յաւաշին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեց զաւառ, ի զիւղն Երիդայ, ի մեհեանն Անահտական, զի անդ զոհս մատուցեն։ և իբրև կատարեցին զգործն անարժանութեան իջին բանակեցան...» 1. 2. 3. 4. 5.

53 «Արքայ ասէ... եթէ ոչ առնուցու յանձն դիցն պաշտօն մատուցանել, մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջս, որ է փառք աղջիս մերոյ և կեցուցիչ, զորը և թագաւորք ամենայն պա-

տուեն, մանաւանդ թագաւորն Յունաց. որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան և ծնունդ է մեծին արին Արամազդայ». Տ. 12, 13, 14, 15, 16, 17.

Զ. 68. « Կ որ են իսկ ճշմարտիւ արարիչ՝ թշնամանիս, և զմեան Անահիտ, որով կեաց և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց, և ընդ նմին և զմեծն և զարին Արամազդ, զարարիչն երկնի և երկրի» 6, 7, 8, 9.

ԹԲ. 127. « Ողջոյն հասեալ և շինութիւն դիցն օգնականութեամբ, լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, ինամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ, և քաջութիւն հասցէ ձեզ ՚ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհն» 8, 9, 10.

ԹԲ. 786. «Եւ ապա յետ այսորիկ անդէն ՚ի սահմանակից զաւառն Եկեղեաց ելանէր Եւ անդ ելեալ դիւացն ի մեծ և ի բուն մեհենացն Հայոց թագաւորացն, ՚ի տեղիս պաշտամանցն, յԱնահական մեհենին... Եւ որք դիմեալ հասեալ էին .. սուրբն Գրիգոր թագաւորաւն հանգերձ, փշրէին զոսկի պատկերն Անահական կանացի դիցն, և ամեննին զտեղին քանդեալ վատնէին, և զոսկին և զարծաթին աւար պաեալ» 10, 11, 12, 16, 17, 1, 2.

Անահակ մասին գովիստով և խորին երկիրածութեամբ խոսողն Հայոց ոչ քրիստոնեայ թագաւոր Տրդատն է, իսկ նրան հակառակ խօսողն ու Անահատին անւանարկողն ու ոչինչ հաւողը քրիստոնեայ ու խորին հաւատացող մէկը: Երկուսի մէջ կանգնած է պատմագիրը, որ տալիս է օրեկտիւ կերպով երկու իրարժիսող այդ աշխարհահայեացները»:

Avesta. last 5. Vendidad 13, an Ardivi Qura Anahita I. 1. Անուրա-Մազդան խօսում է Չրիտա Զարագուստարին 1. « Դուսպէրէ, ով Զարագուստը, իմ երազահաս կոյս Արդիվիին (Անահատին) աղօթես, լայնանիստ, առողջաբեր, սատանային թշնամի, Անուրային հաւատարիմ, մարդկանց պատւելու արժանի, մարդկանցից զնահատելի» (Անահատին)...

2. « Որը (Անահատ-Արդիւին) բոլոր մարդկան սերմերը և բոլոր կանանց արգանդի պառուղը ծնելու է պատրաստում, և բոլոր կանանց բազդաւոր ծննդարերութեան օգնում...» անդ երես 379—380.

63. Կոյս և երազահաս Արդիվիի, շտապիր ինձ օգնութեան, բեր ինձ շտապով օգնականութիւն, հազարաւոր զոհեր կանեմ ես քեզ...» անդ. երես 389.

78. Գալիս է անա ինձ օգնութեան կոյս Արդիվիին, մի գեղեցիկ կոյսի կերպարանքով, մի զգաստ, զեղեցիկ մաքրուած (լւացւած), ոսկեայ ոտնամաններով...» անդ. երես 391—392.

87. «Թեզ արբունքին հասած աշխատասէր աղջկերքն իրենց հայրենի տանը... մի աշխատասէր և ընդունակ տանուտէր (ամուսին) կիմնդրեն։ Թեզ յդի կանայք դիւրին ծնունդ կիմնդրեն... անդ երես 393.

126. «Կոյս, երագահատ Արդիսի... մի փարթամ երիզաւորւած ոսկեայ զգևատ սիրուն հագած. անդ երես 400.

Այս տողերը վերցրել ենք Karl Goldsteinerի Ավեստայի գերմանական թարգմանութիւնից։ Մենք կարող էինք տւեալների նոյնանման մի երկար շարք առաջ բերել, բայց եղածով բաւականանք։

Երկու շարք այդ տւեալներից հետեւալ ընդհանուր գծերը կարող ենք զուգահեռել իրար—Հայ ըմբռնողութեամբ Անահիան է մեծ տիրունին, հայ ազգի կենսատուն և հովանաւորը, բարերարն ամբողջ մարդկութեան, նա կոյս է և զգաստութեան սկիզբն ու աղբիւրը, նրան զուներ են մատուցանում, նրա արձանը ոսկուց էր կերտած։ Ասել է, նա մաքուր և անարատ էր ինչպէս ոսկին։

Ավեստայի Անահիա—Արդիսին մի գեղեցիկ և զգաստ կոյս է, առողջութիւն պարզեսող և մարդկանց բարերար ու նրանց կողմէց խիստ յարգւած։ Նա երագահատ է և նեղեալների մօտ թե ու թիկունք է կանգնած (Beistand), նա կոյսերին պաշտպան է ու նրան են ազօթում կոյսերը, որ մի լաւ տանուտէր և ամուսին դանին։ Նա ոսկէ շորեր և ոսկէ կօշիկներ ունի։

Կայ արգեօք առանձին կարիք, որ այդ երկու աղբիւրների նմաննորութեան վրայ առանձնապէս ծանրանանք. կարծեմ ոչ, քանի որ նոքա խիստ են պարզ ու խիստ աշքի զարնող։ Նոքա, յամենայն գէպս մի շատ ակնյայտնի բան են բացորշում, —որ հայ ժողովրդի ըրենից Ազաթանգեղոսի քաղած տեղեկութիւնները լիովին համապատասխան են Ավեստայի տւեալներին։ Աղբիւրի մասին թէ բանաւոր լինի ասել, որ թէ պարսիկը, թէ հայը Անահինի պաշտաման հիմունքները քաղել են ընդհանուր արխական աղբիւրից։

Վերջնականապէս ճիշտ է, թէ սեմիտներն Անահատի փոխառութիւնից յետոյ—քանի որ նոքա Անահիաը պարսիկներից են փոխառել—ժամանակի ընթացքում նրան ազգայնացրին։ Նա գառաւ բարելոնացւոց և լիդիացոց հզօր աստւածուհիներից մէկը։ Նոցա մօտ միայն Անահիտի ըմբռնողութեան հետ կապւեց, այսպէս կոչւած, Անահիտան պաշտամունքը. նոցա մօտ էր, որ կոյսերն ամուսնանալուց առաջ Անահիտի տաճարում իրենց կուսութիւնը խախտել էին տալիս որևէ մէկի, զուցէ և իրենց ապագայ

ամուսնու ձեռքով, — ամուսնանալուց առաջ Այս սովորութեան մէջ, մենք հակում ենք նիփօգայի հետքեր տեսնել, բայց այդ մասին մի այլ աշխատութեան մէջ, Այս էլ ասեմ, որ պատմական տւեալները թոյլ են տալիս ենթագրելու, որ կուսութեան այդ նւիրաբերման սովորութիւնը համատարած չէ եղել և ոչ էլ ամեն մի կոյս հարկադրւած էր այդ միջոցին դիմելու ներէ դա նւիրաբերութեան (գոհաբերութեան) մի սովորութիւն էր, հապա ու բեմն, կարող էր և կամեցողաց լինել, թէև կարող էր նաև պատահել, որ դա կիրառւէր շատ շատերի կողմից: Միանգամայն արդէն առել ենք, որ կուսութեան այդ գոնը հակառակ էր արիական Անահատի բնոյթին. և շատ իրաւամբ Ավեստայի մէջ Անուրա-մազդան միանգամ կշտամբանքով հարցնում է Արդիվի Անահիտին այն գոհաբերութեանց մասին, որ սեմիտներն անում են նրան (խօսքը կուսութեան զոհի մասին է), Արդիվի-Անահիտը վրդովմունքով պատասխանում է, թէ իրեն այդ բանը յայտնի է, լայց այդ վատ սովորութիւնը դիմական է ու իրեն հակառակ: Եւ իրաք, մի աստածունի, որ կոյս է անւանում և արմատն ու աղբիւրն զգաստութեան (բարոյականութեան՝ կուսութիւնը պահ-պանելու և կոյս լինելու նկատմամբ), չի կարող նման գոհաբերութիւններ ոչ միայն պահանջել, այլ նաև թոյլատրել: Զթոյլատրողն այդ գէպքում, ի հարկէ, ժողովրդի մէջ Անահատի մասին դոյլութիւն ունեցող ըմբռնողութիւնը կարող էր լինել:

Կուսութեան մասին մեր առաջ բերած տւեալներից ու նրանց կցած բացատրութիւններից յետոյ, գոյութիւն ունեցող ու մեր ասածներին իրը հակառակ այլ ժողովրդագրական նիւթերը մնում են անարժէք, բայց նամանաւանդ սխալ հասկացւած ու սխալ բացատրւած: Այսպէս, օրինակ, մեզանում կան գաւառներ, բայց յատկապէս ծայրագաւառներ (խօսքս Հայաստանի մասին է), ուր գտնել են խոշոր քարերից շինած առնանդամներ: Դոցա, օրինակ, Անահիտի պաշտաման ու կանանց պոռնկանալու սովորութեան հետքեր համարելը, չասենք ուրիշ բան, գոնէ մեծ սխալ կլինէր: Անկախ այն բանից, որ միանգամայն անապացոյց է, թէ առնանդամի այդ քարարձանները հայկական հին կուլտուրայի մնացորդներ են, կասենք, որ դոքա ինքնին ոչ մի կապ չունին պոռնկութեան և պոռնկանալու հետ: Որդի բերել ցանկացող կինը պէտք է դիմէր նոումը նիփօգային, ու այդ բանն երբէք պոռնկութիւն չի հաջել նոյն իսկ հնդկական սրբազան գրքերի մէջ, ուր մարդուն անհաւատարիմ գտնելին ու ամուսնական անկողնին դաւաճանելը խիստ արգելւած է՝ իրը պոռնկութիւն: Մեր նախ-ընթաց ասածներից մենք գիտենք, որ բոլոր արիների մօտ էլ

չըեր կնոջ կամքով միայն հնարաւոր էր նիփօգա ինստիտուտին զիմել՝ որդիներ ունենալու համար։ Արդ, կինը, որ չեր համաձայնում իրեն ուրիշի յանձնել յղիանալու համար, և ոչ էլ նրա ամուսինն էր ուղում իր չըեր կնոջն արձակել՝ ամուսնալուծութեան դիմել, զանազան սրբութիւնների դուռը զնաւ, ինչպէս ժողովութին է ասում, ամուլ արգանգը բանալու համար։ Նոյն իսկ ներկայ սովորութիւններով, Ախալքալաքի գաւառում, ինչ են անում չըեր կանայք, — եթէ ոչ զնում հնութեան այդ մնացորդների մօտ իրենց արգանգը բանալու համար։ Դա իւրատեսակի ուխտազնացութիւն է, այս մի քիչ տարօրինակ ուխտազնացութիւն ներկայ հասկացողութիւնների անուակէտից, բայց չըեր հին կնոջ համար, ինչպէս և ժամանակակից զիղզկունու համար, զա միանգամայն պարզ ու հասկանալի մի բան էր և է։ ԶԵ որ քարեայ այդ առնանդամները յղիանալու և բնողմաւորւելու խորհրդանշաններ են, ու նրանց ուխտ գնալու այդ բոպէին դոքա մի մի խորհրդաւոր, եթէ կուղէք, սրբութիւններ են, որին ամուլ կինը զիմում է նոյնպիսի երկիւղածութեամբ և հաւատով, ինչպէս որ մի ուրիշը դիմում է մի այլ սրբութեան գուռն՝ իրեն առողջութիւն, իր գործերին և մտադրութիւններին բարի և ցանկալի ընթացք տարու համար և այլն։ Սա գեռ մի այլ օրինակ էլ կըերեմ, որ գեռ այսօրւայ սուրբութիւնների մէջ նկատելի է, և որը դարձեալ չըեր կնոջ արգանգը բանալու (յղիանալու, բնողմաւորւելու) միջոց է ճանաչւում։ Այդ սովորութեան համաձայն ամուլ կինը վերցնում և կապում է իր հարեանութեան մէջ յայտնի օճաղի տէր մի տղամարդու գօտին իր մէջքը՝ յղիանալու համար։ Այս սովորութիւնն հաշել պոռնկութեան հմտք, ոչ այն ժամանակ նիփօգա ինստիտուտն ինքնին մի գերագոյն պոռնկութիւն է։ Բայց սա, ի հարկէ, արսուրդ է։ Օճաղի տէր տղամարդուն դիմելն այն միաքն ունի, որ չէն օճաղը մի առանձին աշքի ընկնող բան է և յատուկ բաղդի նշան։ այդպիսի օճաղի վրայ, հին մարդու հասկացողութեամբ, անընդհատ կերպով բաց են հանգուցեալ հայրերի և պապերի աշքերը։ Այդպիսի օճաղը վայելում է տան տառածների յատուկ և յարատե եկող օրհնութիւնը։ Այդ բոլորի առարկայական առաջոյցը օճաղի շնութիւնն է ու անընդհատ շարունակւութիւն՝ որդինութեան միջոցով։ Դրա հետ շահնեկան է նաև այս յիշել։ — Մեր ժողովրդական կիանքի նկարագրութիւնների մէջ մննք յաճախ կարգացել ենք, որ այս կամ այն գիւղում մի նորաշոյցի պսակից յետոյ, նոքա գնացել են այս ինչ ծերունու օրհնութիւնն առնելու. իսկ ծերունին եղել է, ու սովորաբար միշտ լինում է,

գիւղի մի մեծ ընտանիքի ներկայացուցիչը—պապը։ Այդ օրնութեան միջոցով, շատ անգամ օտար այդ զոյգը ձգտում է նոյնպիսի օրհնուած ու բեղմանաւոր տունուտնեղ հիմնելու, ինչպէս և այն օրհնող պապն ունի։ Նման այլ սովորութիւններ ըստնում եմ առաջ ըերել։

Սխալ հասկացւած և բացատրւած եմ գտնում նաև Մշու ս. Կարապետի մասին եղած աւանդութիւնը և իբր գոյութիւն ունեցող սովորութիւնը¹։ Թողնելով մի կողմ, որ ս. Կարապետի վանքը միշտ էլ ուխտաւոր կանայք մուտք են ունեցել, այստեղ ընթերցողի ուշադրութիւնն եմ հրաւիրում մի շատ սովորական հանգամանքի վրայ։ Ոչ միայն մեզ մօտ, այլ նաև բոլոր ազգերի մօտ, զոյցա թւում ոչ քրիստոնեայ ազգերի մօտ, եթէ միայն նոքանման հիմնարկութիւններ ունին, վանական հիմնարկութիւնները նզնարաններ—մենաստաններ են։ Իրը այդպիսին, նոցա քնակիչները — կրօնաւորները — մենակեցացներ են, անապատականներ։ այսինքն այնպիսիններ, որոնք հրաժարաւած են աշխարհից և աշխարհայինից։ չամուսնանալու միջոցով նոքա ձգտում են ոչ միայն խարազանել իրենց մէջ սեռական կեանքը, այլ նաև մաքառելով նրա հետ՝ տէր և իշխող դառնալ նրա վրայ։ Վանքի, որ ըստ էութեան մի անապատ է, նպատակն այս է՝ աշխարհայինից կտրելու նկատմամբ, իսկ երկնայինին հասնելու համար զրանկցում են նաև աղօթքը կեանքից փախչելու և նզնելու այս փառաւը խիստ աչքի զարնող է, ու համատարած՝ բոլոր տեսակի վանքերի և վանականների համար։ Ասածներիցս փառացի հետևանքըն ու եզրակացութիւնն այն է, որ վանքն ու անապատը փակէին իրենց գոները կանանց առաջ։ Զէ որ կանանց դառնալն՝ աշխարհայինին զառնալուն էր հաւասարի թանի մենք դէպի հինը աւելի հեռաւոր գարերը գառնանք, կտեսնենք, որ կանանց մուտքը դէպի վանքերն էլ աւելի դժւար է եղիլ ու էլ աւելի արգելած։

Դեռ մեր աչքի առաջ մեր վանքերում կանանց մուտքը շատ էլ հաշտ աչքով չէր նայուում և վանական իշխանութեան և վանականների և նոյն ինքն ժողովրդի կողմից։

Խօսք վանքերն ուխտ գնալու հետ չպէտք է շփոթել. նա վերաբերում է կանանց վանքերն ազատ մուտք ունենալուն։ Դեռ անձամբ յիշում եմ, թէ ինչպէս անցեալ դարի ութսունական թւերին երեկոյեան ժամից յետոյ և ոչ մի վանական իրաւունք չունէր էջմիածնի պարապից դուրս գալ՝ առանց կաթուղիկոսի

թոյլտութեան։ Դա արտաքին աշխարհից կտրւելու նշանն էր։ Նոյնն էր և մուտքի մասին կանայք այդ ժամից յետոյ չէին կարող վանքը մուտք ունենալ, իսկ ցերեկն առանց խմբով լինելու կամ առանց տղամարդու ընկերակցութեան վանքի գաւիթը մտնելու չէին համարձակւիլ։ Կանայք, ըստ հին կարգերի, վանք ու առաստարակ վանքեր մտնելու միայն մի ժամանակ ունեին, դա ժամանացութեան ու պատարագի, ինչպէս և վանքի ուխտագնացութեան ժամեն էր։ Արդ, սա հաշեմնք, ինչպէս մեզ մօտ, այնպէս էլ միւս ազգերի ու նոյն իսկ ոչ քրիստոնեայ հնդիկների մօտ, Անահիտի պաշտաման հետեւննք, Մշու ո. Կարապետն իրը վանք նոյնպիսի ընդհանուր սկզբունքներով է դեկավարւում, ինչպէս և միւս վանական հաստատութիւնները։ Ուխտագնացութիւն դէպի այդ վանքն, ինչպէս ասացինք, երբէք արգելած չէ եղել լինին ուխտաւորները կանայք թէ տղամարդիկ։ Ատելութիւնը դէպի կանայք այդ վանքում էլ աւելի է եղել այն պատճառով, որ նա ոչ միայն Յովհաննէս Մկրտչին է նւիրւած, այլ նաև նրա համար, որ այդ վանքի մէջ ամփոփւած են նրա նշխարները՝ ըստ աւանդութեան։ Այս բոլորը զեռ ոչինչ, զոքա զեռ հիմք չէին կարող ծառայել կանանց առանձին խիստ կերպով այդ վանքից հայտնելու։ Այսակեղ գոյներն առանձնապէս խտացնողը Յովհաննէս Մկրտչի պիտաւելն է՝ մի կնոջ դաւերով։ Կանանց դէմ ատելութեան աւանդութիւնն այդ վանքում կապւած է բացառապէս նախորդ տողերի մէջ առաջ բերած հանգամանքի հետ, ու նրանից միայն ծագութեան առած։ Այս էջերի մէջ, թէ թէ սրանից աւելի երկար կանդ առնելն այս առթիւ աւելորդ կլինէր։

Ըստ հայկական հին սովորութեան, որ ընդհանուր է արիական միւս ազգերի համար էլ, յիշատակենք այստեղ, որ հարսնակի ժամանակ հարսը ծածկւած է լինում քողով, նոյն քողը նա ծածկում է նաև իր ամբողջ նշանագրութեան ժամանակ։ Մենք զիտենք, որ նա—նշանւած աղջիկն—այդ քողն ստանում է իրը նշան Մենք միենոյն ժամանակ զիտենք, որ նշան զրւելու ակտով շնշտում է աղջկայ կոյս լինելու և մնալու հանգամանքը։ Ասել է նշան—քողը մատնանշում է խօսեցեալ մի աղջկայ կուսութիւնը, զբանից և այդ քողը գաւանում է անարատութեան և կուսութեան արտայատիչն ու նշանը Բոլոր արիների մօտ էլ հարսը պսակ է զնում պսակով և քողով զարդարւած, նոյնը զըտնում ենք մենք նաև հայերի մօտ։ Հայերի ու սլավոնների (սլուների) մօտ է, որ ամուսնանալը կոչւմ է պսակւել, այսինքն պսակ զնել իր վրայի թէ պսակ զնելն ու թէ քողով ծածկւելը

կուսութեան նշաններ են : Խսկ մենք պատմութիւնից գիտենք, որ Անահտի գլխուն դնում էին ծաղկեայ, վարդերով պսակներ։ Անահտի տօնի օրը նոքա—աղջկերը զարդարում էին ծաղկներով (պսակներով), որ կուսութեան խորհրդանիշն էր՝ ի պատիւ Անահտի՝ կուսութեան Աստւածունու Այստեղ հարեանցօրէն ասենք, որ հարմառոփ ժամանակ պսակ զնելլ քաղաքացիական ամուսնութեան ակտն է, մինչդեռ որ և է աղջկայ զլիին քող ձգելը նշան է միայն նշանադրութեան։ Այստեղ վերյիշնենք, որ միայն կոյսերն են ամուսնանալիս պսակում, այսինքն միայն նոցա գլխին են կատարում կոյսերի համար սահմանւած պսակի արարողութիւններն ու խորհուրդները։

Այս բոլոր ասածներից յետոյ մի բան է միայն հսարաւոր, և դա հայերի մօտ Անահտի պաշտաման գոյութեան ժխտումն է։ Խիստ աշքի զարնող է, որ Ստրաբոնից առաջ հայերի մասին Հերոդոտը մանրամասն տեղեկութիւններ տալիս, և ոչ մի խօսք չի ասում հայերի մօտ Անահտի պաշտաման գոյութեան մասին, իսկ Ստրաբոնը, որ իր տեղեկութիւններից մի լաւ մասը Հերոդոտից է քաղել, պէտք էր հայերի մասին այլ տեղեկութիւնները տար, քան Հերոդոտը։ Հայերի մասին իրը Ստրաբոնի՝ ասածը կարելի՞ է ենթադրել, որ Հերոդոտի ժամանակ գոյութիւն չունենար, իսկ նրանից դարեր յետոյ սովորական դառնար, Վերջին դէպրում, ասել է, Անահտի պաշտամունքն այդ ձեռվ փոխառութիւն էր, թէս մենք այս անգամ ժխտում ենք: Եթէ նոյն իսկ հաստատեի, որ Ստրաբոնի բնագրի այդ տեղն իրօք որ Հայաստանում գործող մի սովորութեան է վերաբերում, այն ժամանակ հսարաւոր եղրակացութիւնն այս է.—Հայերին օտար այդ—Անահտի—պաշտամունքը գործել է Փոքր Հայքում, այստեղ բնակւող լիդական ցեղերի մէջ։ Բոլոր կասկածներից դուրս է, որ Լիդական ժողովուրդն Անահտի պաշտաման հետևող էր։ Ստրաբոնը Փոքր Հայքի մէջ գոյութիւն ունեցած սեմիտական այդ սովորութիւնները նկարագրել և տւել է իրը Հայաստանում գործող մի սովորութիւն, որից և այն թիւրիմացութիւնը, թէ հայերը հետևող են եղել Անահտի պաշտաման։ Բայց այստեղ զարմանալին այն է, որ հայ հետաքրքրուղներն Ստրաբոնի տեսան իրը հալած իւղի տեղ ըն-

1 Այս առթիւ համեմատել Leist-ի հետևեալ տողերը.—«իստեցեալ աղջիկն առանձնապէս պարտաւոր է իր կուսութիւնը պահպանել, որն արիներն հաճութեամբ նրանով են արտայայտում, որ հարսը պսակով և քողով է զարդարում, քողն յետոյ նա վար է առնում»։ Alt-ar. ius civile. երես 109.

դրւնելով, աշխատում են հայ ժողովրդական և պատմական նիւթերով նոյն ազացուցանել:

§ 18.

ՄԱՆԿԱՀԱՍՏԱԵՐԻ ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ. ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ.

Արիական ազգերի մէջ հին ժամանակներից սկսած համատարած սովորութիւն է եղել, ինչպէս տեսանք, իրենց զաւակներին դեռ մանուկ հասակում նշանել: Այդպիսի նշանադրութիւններն երբեմն վերջանում էին մանկահասակների պատակով: Ինչքան էլ ազգային իրաւանորմերն արգելէին այդպիսի պատակներն, այնուամենայնիւ դեռ այժմ էլ արթական շատ ազգերի մօտ տեղի են ունենում մանկանց ամուսնացներու դէպքեր: Այդպիսի իրաւանորմեր դրւել են նաև հայերի մօտ:—

ա. Սահակ Պարթևին նվիրած կանոնախմբի 28-րդ կանոնն արգելում է մանուկների պատակներ կատարել: Մանուկ է ըստ այդ կանոնի նա, ով արբունքի չէ հասել, Հայ կեանքի մէջ հետեւալ հասակաշրջաններն են որոշում.—ծծկեր, մանուկ, պատանի, երիտասարդ, այրական հասակի հասած, ծեր-ծերունի: Մանուկ մինչի 7—8 տարեկան, պատանի մինչի 16—18 տարեկան, երիտասարդ 18—30 տարեկան, առնական հասակ մինչի 45—50 տարեկան և առա ծերութեան հասակը: Այս որոշումներն իհարկէ պայմանական են, ու իւրաքանչիւր գէպքում տարբեր:

Սահակի արգելքը վերաբերում է այն մանկահասակներին, որոնց տարիքը 12-ից քիչ է, քանի որ ըստ տիրող հին սովորութեան թէ անցեալում և թէ մեզ դեռ մօտ տանամենակներում 12—13 տարեկան տղայոց և ազջիկների պատակները միշտ թոյլատրելի է եղել: Ներկայ նոյն իսկ ոռու-պետական օրէնքով տեղացիների (Կովկասում) մէջ 12½, տարեկանների ամուսնութիւնն անթոյլատրելիների շարքում չէ: իսկ այդ օրէնքն ի նկատ ունի տեղացիներիս ազգային-աւանդական սովորութիւնն այդ ամթիւ: Սահակ Պարթևն իր այդ կանոնով ուղեցիլ է մաքառել այն սովորութեան գէմ, որով թոյլատրում էր ժողովրդի մէջ 12 տարեկանից ցած երեխաների պատակներ:

բ. Այնուհետեւ այդ խնդրով զրադւել է ազգային օրէնսդրական մի ժողով 554 թ. Դուին քաղաքում, որ կրկնել է Սահակեան կանոնի արգելքը: Ինչպէս Սահակեան կանոնի, այնպէս էլ Դուինի ժողովի կանոնի (24) տրամադրութեամբ քահանաներին էր մասում որոշելու պատակւելու զոյգերից մըն է արբունքի հասել,

և որը ոչ Այստեղ բնականաբար կարող էր դեր խաղալ պսակւողների արտաքին երևոյթը:

Ը. Եատ բնական էր, որ օրէնքի կողմից պսակւողների տարիքի որոշ յայտնի սահման դրւած չլինել առաջ բերէր ոչ միայն թիւրիմացութիւններ, այլ նաև կամայականութիւններ գործադիր պաշտօնեանների կողմից: Անկասկած այդ բանն ի նկատի ունենալով է որ, 1243 թվին Սսի ազգային ժողովը պսակւող տղի համար սահմանում է լրիւ 14 տարեկան և աղջկայ համար լրիւ 12 տարեկան հասակլու նորմի այսպէս բարձրացումն, այն էլ կիրկիայում, թերեւ պէտք է բացատրել մասամբ յունա-բիւլգանդական օրէնքրութեան ազդեցութեամբ:

Ճ. Ամուսնական չափահասութեան նկատմամբ, հակառակ ժողովով սահմանւած կարգերին, հայ ժողովրդի մէջ գործել են այլ սովորութիւններ, որոնք տարբեր տեղեր տարբեր են եղել: Ամեն տեղ էլ, սակայն, սովորութիւնը կանոնական կարգերով դրւած չափահասութեան սահմանն իջեցրած է եղել մի քանի տարով: Անչափահասների պսակների առթիւ քահանաների համար որոշած պատժական կարգերը մնացել են համարեա ապարդիւն՝ թէ օրինացանց քահանաների և թէ օրէնքին հակառակ ամուսնացողների հարար:

Միջին դարերի մի վաւերագիր ամենից ցայտուն կերպով է նկարագրում անչափահասների պսակների մասին տիրող կարգերն այդ դարերում: Խօսքը վերաբերում է Յակոբ վարդապետ Թրիմեցու կանոնական մի աշխատութեանը, որ կարելի է գտնել, նամանաւանդ Թրիմեան ծագումն ունեցող, ձեռագիր կանոնագրքերին կից: XV-րդ դարու այդ աշխատութեան մէջ բացի հաս ու չհասական խնդիրների պարզաբանութիւնից, կայ նաև ամուսնական չափահասութեան վերաբերեալ մի հրահանգութիւն, ուր նա տիրող սովորութեան դէմ է գուրս գալիս: Պէտք է ենթագրել, որ այդ վարդապետը ժամանակակիցների մէջ մեծ հեղինակութիւն ունեցող մէկն է եղել, հայ եկեղեցու մի մեծ վարդապետ, որ յանդգնել է կանոնական մի կարգ սահմանել ու հոգևորականութեան հրահանգութիւններ տալ: Հաս ու չհասի աստիճանները որոշելու գործում նա ունեցել է անազին ազդեցութիւն իր յետնորդների վրայ, նրանով զեկավարել են դարեր շարունակ մինչի մեր օրերը: Ըստ էութեան հարցասիրութեան խնդիր չիմ շինում Թրիմեցու թողած այդ վաւերագիրը և ոչ էլ խօսում այն բանի մասին, թէ յետագայ դարերի վարդապետներն ու առաջնորդները օրինազանցութիւն են արել՝ Թրիմեցու գործն իրենց ուղեցոյց

ընտրելով: Այս թողնենք մի կողմ ու անցնենք ներկայ խնդրին վերաբերեալ Յակովը գ. Խրիմեցու ասածներին.—

«Հստ օրինի, պէտք էր իսկապէս, որ փեսացուն լրիւ 16 և հարսնացուն լրիւ 14 տարեկան հասակին հասած լինէին, որպէսողի պսակւէին, բայց մեր սուրբ հայրերը վատ ժամանակների պատճառով պսակւողների տարիքն երկու տարով իջեցրին: Մենք ևս մեզ հարկի մէջ ենք տեսնում, քանի որ ծնողները (պսակւողների) աղաղակում, ըմբոստանում և հակառակում էին, (պսակւողների) տարիքը էլի երկու տարով իջեցնել, այնպէս, որ հարսը լրիւ 10 և փեսացուն լրիւ 12 տարեկան դառնալուց յետոյ կարողանան պսակւել: Բայց եթէ հարսը 10 տարին և փեսան 12-ը չլրացրած ամուսնանան, հապա այդ ամուսնութիւնը հաշելու է անընդունելի: Չպէտք է մանկահասակներին ամուսնացնել, քան այդ թոյլաւորած է. զբա համար ես կացեց այդ չար սովորութիւնից... հրահանգում է Խրիմեցին:

Խրիմեցու այս խօսքերի մէջ իր ժամանակում գործող սովորոյթի օրէնքն է զրի առնւած: Ըստ այդմ մանկահասակների ամուսնութիւնը համատարած մի սովորութիւն է եղել. դժւար չէ հնթագրել, որ անկասկած ջահիլ ամուսնացների տարիքն աւելի ցած է եղել քան Խրիմեցու սահմանած շատ զիջող կարգն է: Այստեղ կցինք, որ հին սովորութեան մացորդների համաձայն անչափահաս ամուսնացների տարիքը 9—12-ի մէջն էր տարութերում:

Մինչի այժմ առաջ բերած տւեալները վերաբերում էին անչափահաս ամուսնացներին: Նոցա զէմ ուղղւած կանոնները մի միտք ունէին—արգելել անչափահասների պսակներն ու առնասարակ այդ չար սովորութեան առաջն առնել: Եթէ այդ կանոնները քահանաներին պատժի ենթարկելու սպասնալիքով կարող էին որոշ չափով մանկահասների պսակների առաջն առնել, գործ միանգամայն անգօր էին հին մանկահասների նշանադրութեան սովորութեան գէմ: Այդ սովորութիւնն արգիլող կարգեր իսկապէս չկային, վերսի կանոնների տրամադրութիւնից դա հնթագրաբար պէտք էր հասկանալ, բայց եթէ նոյնիսկ լինէին էլ, գարձեալ միանգամայն անգործնական և անուժ կլինէին: Մանկահասների նշանադրութիւններից մեզ յայտնի է, որ ըստ տիրող հին սովորութեան արիական շատ ազգերի նոցա թւում և մեր ժողովը վըրդի մէջ շատ սովորական է նոյն իսկ օրօրոցում նշանել ծծկերին: Սակաւ չեն դէպքեր, երբ նշանադրութեան խօսքը տալիս առնում են (երկու յդի մայրեր սովորաբար) երբ երեխաները զեռ չեն ծնած: Հարաւային Հնդկաստանում, ասում է Կոլերն, երե-

խաներին նշանում են ծնելուց առաջ այն պայմանով, եթէ նորածինները տարբեր սեռերից լինին¹⁾: Թէ մանկահասակների և թէ դեռ չծնած երեխաների նշանելու սովորութիւնն համատարած է եղել շատ, իբարեց բոլորովին տարբեր ծագումով, ցեղերի ու ժողովուրդների մէջ: Նոյն կողերի ասելով համանման սովորութիւններ գոյութիւն ունին նաև արևմտեան Աֆրիկայի զանազան ցեղերի մօտ²⁾:

Մեզ մեռմ է մի վերջին խնդիր հարցասիրութեան նիւթշինել՝ աշխատելով մանկահասակների ամուսնութիւնը նաև տընտեսական գործօնով բացատրել:

Նախընթացի մէջ մենք փորձեցինք բացատրել մանկահասակների նշանադրութեան դրդիչ պատճառը, ու մենք գտանք, որ դա կուսութիւնն ապագայ ամուսնուն վերապահելու և ապահովելու ձգտութիւն է: Չուր աշխատանք կլինէր, եթէ նոյն պատճառի գոյութիւնն և մանկահասների ամուսնութեան հանգամանքի մէջ աշխատէինք որոնել: Ուստի և այդ միտքն հենց սկզբից թողնենք: Իմ անձնական զիտողութիւններն այն շրջաններում, ուր անչափահասների և փոքրահասակների ամուսնութիւններ յանախ են պատահում, ասում են: — Հայրը զիմում է իր անչափահաս որդուն ամուսնացնելուն, երբ տանը պակասում է աշխատաւոր մի ձեռք, տունը կառավարելու, տանտիկնութիւն անելու համար: Ասել է այն դէպքում, երբ տանը կին չկայ, հասակաւոր մի կին, ու տան մեծն էլ, այս դէպքում փոքրահասակի հայրը կամ պապը վերստին ամուսնանալ չեն ուզում: Շատ բնական է, որ մէկն իր անչափահաս կամ փոքրահասակ որդուն կամ թռռան (10—15 տարեկան) չէր ամուսնացնիլ նոյն տարիքով մի աղջկայ հետ, քանի որ, ինչպէս տեսանք, իր ձգտութիւնը էր մի տանտիկին ու տունը կառավարող ունենալ:

Այս բոլորի պարզ եղբակացութիւնն է: — Հայ հայրը փոքրահասակ ու անչափահաս իր որդուն ամուսնացնելու միջոցով ձեռք է բերում մի աշխատաւոր ձեռք: Այստեղ էլ չեմ ասում, որ համայնական հողատիրութեան կարգերում, ընտանիքի մի անդամ պակասելու և աւելանալու հանգամանքն ազդում է ընտանիքի ձեռքը զանուած հողաբաժնի քանակի վրայ: Աշխատող մի ձեռք և հողաբաժնի չպակասելն (որոշ դէպքերում նաև աւելանալն) այն աղջակները կարող էին լինել, որոնք հարկադրէին մէկին իր ոչ չափահաս որդուն ամուսնացնել:

¹⁾ Zpit. f. vergl. RW. III. երես 354.

²⁾ Անդ. III. երես 340.